

Աղետների ռիսկի նվազեցման
Սենդայի 2015-2030թթ.
գործողությունների ծրագիր



United Nations

Աղետների ռիսկի նվազեցման
Սենդայի **2015-2030թթ.**
գործողությունների ծրագիր

Բովանդակություն

Ներածական խոսք	4
Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագիր	5
Աղյուսակ	35

Ներածական խոսք

Աղետների ռիսկի նվազեցման 2015-2030թթ. շրջանակային ծրագիրն ընդունվել է 2015 թ. մարտի 18-ին ճապոնիայի Սենդայ քաղաքում կայացած ՄԱԿ-ի երրորդ համաշխարհային համաժողովում: Դա արդյունք էր 2012թ. մարտին շահագրգիռ կողմերի նախաձեռնությամբ իրականացված խորհրդակցությունների և 2014թ. հուլիսից մինչև 2015թ. մարտ ընկած ժամանակահատվածում անցկացված միջկառավարական բանակցությունների: Բանակցությունները կազմակերպվել էին ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի կողմից՝ ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի խնդրանքով:

Սենդայի գործողությունների ծրագիրը Հյուսիսի գործողությունների 2005-2015թթ. «Ազգերի ու համայնքների աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման» ծրագրի (<ԳԾ) իրավահաջորդ գործիքն է: Ենթադրվում էր, որ <ԳԾ-ն լրացուցիչ լիցք կհաղորդի 1989թ. Բնական աղետների կանխարգելման միջազգային տասնամյակի շրջանակներում գլոբալ մակարդակով իրականացվող ծրագրի աշխատանքներին և «Առավել անվտանգ աշխարհ կառուցելու» ՅՈՒՆԵՍԿՕ-ի ռազմավարությանը. Բնական աղետների կանխարգելման, պատրաստվածության ու մեղմացման ուղղորդիչ սկզբունքներն՝ ընդունված 1994թ. և 1999թ. Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը:

Սենդայի գործողությունների ծրագիրը կառուցված է մի սկզբունքով, որն ապահովում է պետությունների և շահագրգիռ այլ կողմերի <ԳԾ շրջանակներում կատարած աշխատանքների շարունակականությունը և ներառում է խորհրդակցությունների և բանակցությունների ընթացքում առաջ քաշված մի շարք նորամուծություններ: Շատ մեկնաբանների կողմից բնորոշված առավել նշանակալի տեղաշարժերն են. աղետների ռիսկի կառավարումը՝ ի տարբերություն աղետների կառավարման, յոթ գլոբալ նպատակների սահմանումը, աղետի ռիսկի նվազեցումը՝ որպես ակնկալվող արդյունք, նոր ռիսկի կանխարգելմանը, առկա ռիսկի նվազեցմանը և դիմակայունության ամրապնդմանն ուղղված նպատակը, ինչպես նաև մի շարք այլ ուղղորդիչ սկզբունքներ, այդ թվում նաև այն, որ պետություններն են կրում աղետների ռիսկի նվազեցման և կանխարգելման, ինչպես նաև այդ աշխատանքներում ամբողջ հասարակության և պետական հաստատությունների ներգրավվածության ապահովման հիմնական պատասխանատվությունը: Բացի այդ, աղետների ռիսկի նվազեցման գործողությունների շրջանակը զգալիորեն ընդլայնվել է՝ ներառելով իր մեջ բնական և մարդածին վտանգները և հարակից այլ բնապահպանական, տեխնոլոգիական և կենսաբանական վտանգներ ու ռիսկեր: Առողջապահության ոլորտի կայունության ամրապնդումը ևս խիստ խրախուսվում է:

Սենդայի գործողությունների ծրագրում տեղ են գտել նաև հետևյալ ձևակերպումները. աղետների ռիսկի կատարյալ ըմբռնման անհրաժեշտությունը իր դրսևորման բոլոր ձևերով, խոցելիության ու վտանգի հատկանիշները, աղետների ռիսկի կառավարման ամրապնդումը՝ ներառյալ ազգային պլատֆորմները, աղետների ռիսկի կառավարման համար պատասխանատվությունը, պատրաստվածությունը «Անելու ավելին, քան արվում է», շահագրգիռ կողմերի և նրանց դերի ճանաչումը, ռիսկի նկատմամբ զգայուն ներդրումների հավաքագրումը նոր ռիսկերի առաջացումից խուսափելու համար, առողջապահության կառուցվածքների կայունությունը, մշակութային ժառանգությունը և աշխատատեղերը, միջազգային համագործակցության և գլոբալ գործընկերության ամրապնդումը, դոնոր կազմակերպությունների քաղաքականություններն ու ծրագրերը, որտեղ հաշվի են առնված ռիսկերը, ներառյալ միջազգային ֆինանսական հաստատությունների ֆինանսական աջակցությունն ու վարկերը: Հստակ սահմանված է նաև ՄԱԿ-ի կառավարման մարմիններին օժանդակող Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմի և աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմների դերը, որպես օրակարգերի համաձայնեցման, մշտադիտարկման և պարբերական դիտարկման մեխանիզմներ:

ՄԱԿ-ի աղետների ռիսկի միջազգային ռազմավարության գրասենյակին հանձնարարված է օժանդակել Սենդայի գործողությունների ծրագրի իրականացմանը, հետագա գործընթացներին և դիտարկմանը:



Մագարետա Վոլստրոմ

Աղետների ռիսկի նվազեցման հարցերով

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ

Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագիր

Բովանդակություն

I. Նախաբան	7
II. Ակնկալվող վերջնական արդյունքը և նպատակը	11
III. Ուղղորդիչ սկզբունքները	12
IV. Գործունեության գերակա ուղղությունները	14
Գերակա ուղղություն 1. Աղետների ռիսկի գիտակցում	15
Գերակա ուղղություն 2. Աղետների ռիսկի պետական կառավարման հզորացում՝ ի նպաստ աղետների ռիսկի կառավարման զարգացման	18
Գերակա ուղղություն 3. Ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայունության հզորացման համար	21
Գերակա ուղղություն 4. Աղետների պատրաստվածության ամրապնդում արդյունավետ արձագանքման համար և «Անել ավելին, քան արվում է» սկզբունքի ներդրում վերականգնման, վերականգնողական և վերակառուցման բնագավառներում	24
V. Շահագրգիռ կողմերի դերը	27
VI. Միջազգային համագործակցություն և գլոբալ գործընկերություն	29

I. Նախաբան

1. Աղետների ռիսկի նվազեցման հետ-2015թ. շրջանակային ծրագիրն (ԱՌՆՀՇԾ-15) ընդունվել է 2015թ. մարտի 14-18-ին Ճապոնիայի Միյագի նահանգի Սենդայ քաղաքում կայացած Աղետների ռիսկի նվազեցման երրորդ համաշխարհային համաժողովի ժամանակ, որը յուրօրինակ հնարավորություն էր երկրների համար՝

- (ա) ընդունելու հակիրճ, նպատակային, հեռանկարային և գործողությունների վրա հիմնված Աղետների ռիսկի նվազեցման հետ-2015թ. շրջանակային ծրագիրը,
- (բ) ավարտելու «Պետությունների և համայնքների մակարդակով աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման» Հյուսիսային գործողությունների 2005-2015թթ. ծրագրի (ՀԳԾ) իրականացման գնահատումն ու վերանայումը¹,
- (գ) ուսումնասիրելու աղետների ռիսկի նվազեցման տարածաշրջանային և ազգային ռազմավարությունների ու ծրագրերի իրականացման փորձն ու առաջարկությունները, ինչպես նաև ՀԳԾ իրականացման շրջանակներում ձեռք բերված տարածաշրջանային համաձայնությունները,
- (դ) որոշելու Աղետների ռիսկի նվազեցման հետ-2015 շրջանակային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ համագործակցության ուղղությունները,
- (ե) սահմանելու Աղետների ռիսկի նվազեցման հետ-2015 շրջանակային ծրագրի իրականացման պարբերական դիտարկման ընթացակարգերը,

2. Համաշխարհային համաժողովի ժամանակ պետությունները ևս մեկ անգամ հաստատեցին իրենց պատրաստակամությունն առաջնահերթ կարգով լուծելու աղետների ռիսկի նվազեցման և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացման հետ կապված խնդիրները² դիտարկելով այն կայուն զարգացման և աղքատության կրճատման համատեքստում, և անհրաժեշտության դեպքում, ներառելու այդ խնդիրները բոլոր մակարդակների քաղաքականություններում, պլաններում, և բյուջեներում, ինչպես նաև համապատասխան շրջանակային ծրագրերում:

Հյուսիսային գործողությունների ծրագիր. քաղված դասեր, բացահայտված թերություններ և հետագա մարտահրավերներ

3. 2005թ. Հյուսիսային գործողությունների ծրագրի ընդունումից ի վեր դրա իրականացման վերաբերյալ ազգային և տարածաշրջանային, ինչպես նաև այլ համաշխարհային հաշվետվություններից տեղեկանում ենք, որ պետությունները և այլ համապատասխան շահագրգիռ կողմեր աղետների ռիսկի նվազեցման ոլորտում առաջընթաց են գրանցել տեղական, ազգային և տարածաշրջանային մակարդակներում, որի արդյունքում որոշ աղետների դեպքում նվազել է մահացության մակարդակը³:

Աղետների ռիսկի նվազեցումը ծախսային առումով արդյունավետ ներդրում է՝ հետագա

1 A/CONF.206/6 և Corr.1, գլուխ. I, բանաձև 2:

2 Դիմակայունությունը սահմանվում է որպես «Վտանգի ենթակա հասարակության, համայնքի կամ համակարգերի ունակությունը դիմակայելու վտանգի հետևանքներին, դրանք կրելու, դրանց հարմարվելու և ժամանակին ու արդյունավետ վերականգնվելու, այդ թվում՝ իրենց հիմնական կառուցվածքների գործառույթների պահպանման և վերականգնման միջոցով: 2009 UNISDR Terminology on Disaster Risk Reduction, Geneva, May 2009. (<http://www.unisdr.org/we/inform/terminology>).

3 ՀԳԾ-ում վտանգը սահմանվում է որպես «Հնարավոր վնաս պատճառող ֆիզիկական իրողություն, երևույթ կամ մարդկային գործունեություն, որը կարող է առաջացնել կյանքի կորուստ կամ վնասվածք, գույքի վնաս, սոցիալական և տնտեսական խնդիրներ կամ շրջակա միջավայրի դեգրադացիա: Վտանգները կարող են ներառել թաքնված հետևանքներ, որոնք հետագայում կարող են դառնալ սպառնալիք և կարող են լինել տարբեր ծագման. բնական (երկրաբանական, հիդրոլոգիկաբանական և կենսաբանական) կամ առաջացող մարդկային գործունեության արդյունքում (շրջակա միջավայրի դեգրադացիա և տեխնոլոգիական վտանգներ):»

կորուստներից խուսափելու համար:

Աղետների ռիսկի արդյունավետ կառավարումը նպաստում է պետությունների կայուն զարգացմանը: Վերջիններս զարգացրել են աղետների ռիսկի կառավարման իրենց կարողությունները: Քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման և գիտելիքների ձեռք բերման ու փոխանակման գործում կարևոր տեղ են զբաղեցրել աղետների ռիսկի նվազեցման ռազմավարական խորհրդատվական, համակարգման և համագործակցության ձևավորման միջազգային մեխանիզմները, ինչպիսիք են Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ ու տարածաշրջանային պլատֆորմներն, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային համագործակցության այլ համապատասխան ֆորումներ: Ընդհանուր առմամբ, Հյուսիսի գործողությունների ծրագիրը կարևոր գործիք է հանդիսացել՝ հանրային և հաստատութենական իրազեկվածության բարձրացման, քաղաքական կամքի խթանման և բոլոր մակարդակներում բազմաթիվ շահագրգիռ կողմերի օժանդակությամբ գործողությունների խթանման և ակտիվացման համար:

4. Այնուամենայնիվ, միևնույն 10 տարվա ժամանակահատվածում աղետները շարունակաբար մեծ վնաս են հասցրել, և արդյունքում դրանցից տուժել են մարդիկ, համայնքներն ու երկրները: Աղետների արդյունքում, ավելի քան 700 հազար մարդ զոհվել է, 1,4 միլիոն՝ վիրավորվել և մոտ 23 միլիոն մարդ մնացել է անօթևան: Ընդհանուր առմամբ, աղետներից, այսպես թե այնպես, վնաս է կրել ավելի քան 1,5 միլիարդ մարդ, ընդ որում ամենադժվար կացության մեջ հայտնվել են կանայք, երեխաները և խոցելի իրավիճակներում գտնվող մարդիկ: Ընդհանուր տնտեսական վնասը կազմել է 1,3 տրիլիոն ԱՄՆ դոլար: Ավելին, 2008-2012 թվականների ընթացքում 144 միլիոն մարդ տեղահանվել է աղետների պատճառով: Աղետները, որոնք ավելի են սաստկանում կլիմայի փոփոխության հետևանքով, և որոնց հաճախականությունն ու ուժգնությունը գնալով մեծանում է, էականորեն խոչընդոտում են կայուն զարգացման առաջընթացին: Փաստերը վկայում են, որ բոլոր երկրներում մարդկանց անպաշտպանվածությունն ավելի արագ է մեծանում, քան նվազում է խոցելիությունը⁴, որի արդյունքում առաջանում են նոր ռիսկեր և կայուն աճում են աղետների պատճառած վնասները տնտեսական, սոցիալական, առողջապահական, մշակութային և բնապահպանական ոլորտներում՝ էական ազդեցություն թողնելով կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, հատկապես տեղական և համայնքային մակարդակներում: Հաճախ տեղի ունեցող փոքրամասշտաբ և դանդաղ առաջացող աղետներն ազդում են մասնավորապես համայնքների, տնային տնտեսությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների վրա և ընդհանուր վնասների մեջ կազմում բարձր տոկոս: Բոլոր երկրներում, հատկապես զարգացող երկրներում, որտեղ աղետների պատճառով մահացությունը և տնտեսական վնասներն անհամաչափորեն բարձր են, գոյություն ունեն հնարավոր թաքնված ծախսերի ավելացման սպառնալիք և ֆինանսական ու այլ պարտավորությունների իրականացման մարտահրավերներ:

5. Չափազանց հրատապ և կարևոր է կանխատեսել, պլանավորել և նվազեցնել աղետների ռիսկը, որպեսզի հնարավոր լինի ավելի արդյունավետ պաշտպանել մարդկանց, համայնքներն և երկրները, նրանց ունեցվածքը, առողջությունը, մշակութային ժառանգությունը, սոցիալ-տնտեսական ակտիվներն ու էկոհամակարգերը և, այդպիսով, հզորացնել նրանց դիմակայունությունը:

6. Բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ծավալուն աշխատանքներ իրականացնել նվազեցնելու սպառնալիքներն ու խոցելիությունը, որը կնպաստի նոր աղետների ռիսկի կանխմանը և աղետների ռիսկի առաջացման հանդեպ պատասխանատվության սահմանմանը: Հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել աղետների ռիսկի առաջացման արմատական պատճառներին, ինչպիսիք են աղքատության և անհավասարության հետևանքները, կլիմայի փոփոխությունը և փոփոխականությունը, չպլանավորված և արագ ուրբանիզացիան, հողօգտագործման վատ կառավարումը և այնպիսի համակցված գոր-

⁴ Հյուսիսի գործողությունների ծրագրում խոցելիությունը սահմանվում է որպես «Ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի գործոններով կամ գործընթացներով պայմանավորված իրավիճակ, որը մեծացնում է համայնքի վտանգների ազդեցությանը ենթարկվելու մակարդակը»:

ծոններ, ինչպիսիք են՝ ժողովրդագրական փոփոխությունները, հաստատութենական թույլ կառավարումը, քաղաքականությունները, որտեղ հաշվի չեն առնվում ռիսկերը, աղետների ռիսկի նվազեցման ոլորտում մասնավոր ներդրումների համար կանոնակարգերի և խրախուսման միջոցների բացակայությունը, համալիր մատակարարման ցանցերը, տեխնոլոգիաների սահմանափակ հասանելիությունը, բնական պաշարների անկանոն օգտագործումը, էկոհամակարգերի դեգրադացումը, պանդեմիաներն ու համաճարակները: Ավելին, հարկավոր է հզորացնել աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ կառավարումն ազգային, տարածաշրջանային և համընդհանուր մակարդակներում և զարգացնել աղետների արձագանքման, վերականգնման և վերակառուցման պատրաստվածությունն ու ազգային համակարգումը: Անհրաժեշտ է օգտագործել աղետներից հետո ձեռք բերված միջազգային փորձն ու մեթոդները՝ ավելի արդյունավետ վերականգնման և վերակառուցման համար:

7. Աղետների ռիսկի նվազեցման համար հարկավոր է կիրառել ավելի ընդլայնված և մարդկանց հետաքրքրություններն հաշվի առնող կանխարգելիչ մոտեցում: Աղետների ռիսկի նվազեցման գործընթացները պետք է ներառեն տարատեսակ վտանգներ և ոլորտներ և արդյունավետ լինելու համար՝ լինեն ներառական և հասանելի: Ստանձնելով առաջնորդի, կանոնակարգողի և համակարգողի դերը, կառավարությունները պետք է միևնույն ժամանակ աշխատեն համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ կանանց, երեխաների և երիտասարդների, հաշմանդամություն ունեցող մարդկանց, աղքատների, փախստականների, բնիկ ժողովուրդների, կամավորների, համայնքների մասնագետների և տարեցների հետ, և վերջիններիս ներգրավեն քաղաքականությունների, պլանների և չափանիշների մշակման և իրականացման գործընթացներում: Անհրաժեշտ է, որպեսզի հանրությունը և մասնավոր ոլորտի ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես նաև ակադեմիական, գիտական և հետազոտական ոլորտի հաստատություններն ավելի սերտորեն աշխատեն՝ ստեղծելով համագործակցության հնարավորություններ, իսկ գործարար ոլորտի կազմակերպությունները ներառեն աղետների ռիսկի հետ կապված խնդիրներն իրենց կառավարման գործընթացներում:

8. Աղետների ռիսկի նվազեցման գործում պետությունների, ազգային և տեղական իշխանությունների, ինչպես նաև համայնքների և գործարար հասարակության համար անփոխարինելի է միջազգային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և անդրսահմանային համագործակցության աջակցությունը: Անհրաժեշտ է հզորացնել առկա մեխանիզմներն՝ արդյունավետ աջակցություն ցուցաբերելու և բարենպաստ համագործակցություն իրականացնելու համար: Զարգացող երկրներին, հատկապես ամենաթույլ զարգացած երկրներին, զարգացող փոքր կղզի-պետություններին, ցամաքով շրջապատված զարգացող երկրներին և աֆրիկյան երկրներին, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրներին, որոնց դիմաց ծառայել են կոնկրետ մարտահրավերներ, անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ ուշադրություն և աջակցություն, որպեսզի երկկողմ և բազմակողմ համաձայնությունների միջոցով զարգացվեն ներքին ռեսուրսները և կարողությունները, որն էլ կապահովի միջազգային հանձնառությունների և պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ պատշաճ, կայուն և պատեհաժամ կարողությունների զարգացումը, ֆինանսական և տեխնիկական աջակցությունը և տեխնոլոգիաների փոխանցումը:

9. Ընդհանուր առմամբ, Հյուսիսի գործողությունների ծրագիրը կարևորագույն ուղղորդող գործիք է հանդիսացել աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում և նպաստել Հազարամյակի զարգացման նպատակների իրագործման առաջընթացին: Այնուամենայնիվ, ՀԳԾ իրականացման ընթացքում բացահայտվել են մի շարք խնդիրներ՝ կապված աղետների ռիսկը պայմանավորող գործոնների վերացման և գործողությունների նպատակների

ու առաջնահերթությունների⁵ ձևակերպման հետ, որն անհրաժեշտ է բոլոր մակարդակներում աղետների դիմակայունության հզորացման և իրականացման պատճառ միջոցների ապահովման համար: Այդ խնդիրները ցույց են տալիս, որ հարկավոր է մշակել գործողությունների վրա հիմնված ծրագիր, որը կառավարությունները և համապատասխան շահագրգիռ կողմերը կկարողանան իրականացնել երկուստեք աջակցման և փոխլրացման միջոցով, և որը կօգնի սահմանել կառավարման ենթակա աղետների ռիսկ և կապահովի դիմակայունության ամրապնդման համար անհրաժեշտ ներդրումները:

10. Հյուսիս գործողությունների ծրագրի իրականացման տասը տարիներից հետո աղետները դեռևս շարունակում են խոչընդոտել կայուն զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

11. Հետ-2015 զարգացման օրակարգի, զարգացման ֆինանսավորման, կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ միջկառավարական բանակցությունները միջազգային հանրությանը եզակի հնարավորություն են տալիս իրենց քաղաքականությունների, տարբեր հաստատությունների գործունեության, նպատակների, ցուցանիշների և գնահատման համակարգերի համապատասխանելիության ապահովման համար, իհարկե իրենց մանդատներին համահունչ⁶: Իրատեսական կապերի ապահովումը կնպաստի դիմակայունության զարգացման և աղքատության վերացման համընդհանուր նպատակի իրագործմանը:

12. Նշվում է, որ պետք է անդրադառնալ ՄԱԿ-ի 2012թ. Կայուն զարգացման համաժողովի արդյունքում ձևավորված «Մեր երազած ապագան» հրատապ մարտահրավերին ավելի եռանդուն՝ դիտարկելով այն կայուն զարգացման և աղքատության վերացման համատեքստում և ներդնելով բոլոր մակարդակներում: Համաժողովը նաև վերահաստատում է Շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի հռչակագրի բոլոր սկզբունքները⁷:

13. Կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների լուծումը, որպես աղետների ռիսկի գործոններից մեկը, հնարավորություն է ստեղծում փոխկապակցված միջկառավարական գործունեության միջոցով ողջամիտ և համաձայնեցված կերպով նվազեցնել աղետների ռիսկն՝ ըստ արժանվույն հաշվի առնելով ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մանդատը⁸:

14. Վերոնշյալի իրականացման և աղետների ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է անդրադառնալ գոյություն ունեցող մարտահրավերներին և նախապատրաստվել հաղթահարելու ապագա մարտահրավերները, իրականացնելով աղետների ռիսկի մշտադիտարկում, գնահատում, ըմբռնում և այդ տեղեկատվության փոխանակում, աղետների ռիսկի կառավարման և համակարգման հզորացում համապատասխան հաստատություններում ու ոլորտներում, համապատասխան շահագրգիռ կողմերի ամբողջական և էական մասնակցության ապահովում համապատասխան մակարդակներում, ներդրումներ մարդկանց, համայնքների և պետությունների տնտեսական, սոցիալական, առողջապահական, մշակութային և կրթական դիմակայունության հզորացման մեջ, ինչպես նաև շրջակա միջա-

5 Հյուսիս գործողությունների 2005 -2015թթ. ծրագրի գերակա ուղղություններն են՝ (1) երաշխավորել, որ աղետների ռիսկի նվազեցումը պետական և տեղական նշանակության գերակա ուղղություն է և գտնվում է ամուր հաստատութենական հիմքերի վրա, (2) բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկը, ինչպես նաև ամրապնդել վաղ ազդարարման համակարգը, (3) օգտագործել գիտելիքը, կրթությունը և նորարարությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար, (4) նվազեցնել ռիսկի հիմնարար գործոնները, (5) բարձրացնել աղետներին արդյունավետ արձագանքելու պատրաստվածությունը բոլոր մակարդակներում:

6 A/RES/66/288, հավելված

7 ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման կոնֆերանսի հաշվետվություն, Ռիո դե Ժանեյրո, 1-14 հունիս, 1992թ., կոնֆերանսի ժամանակ ընդունված բանաձև I (ՄԱԿ-ի տպագրություն, գրուխ I, N: E 93.1.8 և համապատասխան ուղղումներ), որոշում 1, հավելված I.

8 Սույն ծրագրում նշված կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները մնում են ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի սահմաններում՝ Կոնվենցիայի անդամ պետությունների լիազորության տակ:

վայրի պահպանության ոլորտում, այդ թվում տեխնոլոգիաների և հետազոտությունների միջոցով, տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի, պատրաստվածության, արձագանքման, վերականգնման և վերակառուցման հզորացում: Ազգային ջանքերը և կարողությունները լրացնելու նպատակով հարկավոր է զարգացնել միջազգային համագործակցությունը զարգացած ու զարգացող երկրների ու պետությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների միջև:

15. Սույն ծրագիրը վերաբերում է բնական կամ տեխնածին վտանգավոր երևույթներից առաջացող փոքրածավալ և մեծածավալ, հաճախակի և հազվադեպ, հանկարծակի և դանդաղ առաջացող աղետներին, ինչպես նաև բնապահպանական, տեխնոլոգիական և կենսաբանական վտանգներին և ռիսկերին: Ծրագրի նպատակն է ներդնել աղետների ռիսկի կառավարումը զարգացման ոլորտի բոլոր մակարդակներում, ինչպես նաև այդ ոլորտի տարբեր հատվածների միջև:

II. Ակնկալվող վերջնական արդյունքը և նպատակը

16. Չնայած դիմակայունության հզորացման և կորուստների ու վնասների կրճատման ոլորտում գրանցված որոշակի առաջընթացին, աղետների ռիսկի էական նվազեցման գործընթացը պահանջում է հաստատակամություն, համառություն և ավելի մեծ ուշադրություն մարդկանց և նրանց առողջության ու կյանքի պայմանների նկատմամբ և, իհարկե, հետևողականություն: Շարունակելով Հյուսիսի գործողությունների ծրագիրը, սույն ծրագիրը հաջորդ 15 տարիների ընթացքում նպատակ ունի հասնելու հետևյալ արդյունքի.

Աղետների ռիսկի և կյանքի, ապրուստի և առողջության, ինչպես նաև մարդկանց, ձեռնարկությունների, համայնքների և պետությունների տնտեսական, ֆիզիկական, սոցիալական, մշակութային և բնապահպանական ակտիվների կորուստների էական նվազեցում:

Վերոնշյալ արդյունքին հասնելու համար անհրաժեշտ է բոլոր պետությունների քաղաքական մեծ հանձնառությունն ու ներգրավվածությունը բոլոր մակարդակներում թե՛ սույն ծրագրի իրականացման, թե՛ գնահատման և թե՛ բարենպաստ միջավայր ստեղծելու գործընթացներում:

17. Վերջնական արդյունքի նվաճման համար հարկավոր է իրագործել հետևյալ նպատակը՝

Կանխել նոր և նվազեցնել առկա աղետների ռիսկը ինտեգրված և միասնական տնտեսական, կառուցվածքային, իրավական, սոցիալական, առողջապահական, մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնոլոգիական, քաղաքական և ինստիտուցիոնալ գործիքների կիրառման միջոցով, որոնք օգնում են կանխել և նվազեցնել վտանգների սպառնալիքն ու խոցելիությունն աղետների նկատմամբ, ինչպես նաև հզորացնել արձագանքման ու վերականգնման պատրաստվածությունը՝ այդպիսով իսկ ամրապնդելով դիմակայունությունը:

Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է զարգացող պետությունների, հատկապես ամենաքիչ զարգացած երկրների, զարգացող փոքր կղզի-պետությունների, ցամաքով շրջապատված զարգացող երկրների և աֆրիկյան երկրների, ինչպես նաև կոնկրետ մարտահրավերների առաջ կանգնած միջին եկամուտ ունեցող երկրների կարողությունների զարգացումը: Սա նշանակում է նաև միջազգային համագործակցության միջոցով աջակցության ձեռքբերում՝ իրենց ազգային առաջնահերթ նպատակների իրականացման համար:

18. Սույն ծրագրի վերջնական արդյունքի և նպատակի իրագործման համընդհանուր առաջընթացը գնահատելու համար ընդունվել են յոթ համընդհանուր թիրախներ: Այս թի-

րախների գնահատումն իրականացվելու է համընդհանուր մակարդակով և մշակվելու են համապատասխան ցուցանիշներ:

Ազգային թիրախները և ցուցանիշները կնպաստեն սույն ծրագրի վերջնական արդյունքի և նպատակի իրագործմանը:

Յոթ համընդհանուր թիրախներն են՝

- (ա) մինչև 2030թ. էականորեն նվազեցնել համընդհանուր մահացությունն աղետներից, համընդհանուր մահացության միջին ցուցանիշը 2020-2030թթ. նվազեցնելով 100 հազարով՝ 2005 -2015թթ. համեմատությամբ,
- (բ) մինչև 2030թ. էականորեն նվազեցնել տուժած մարդկանց թիվը համընդհանուր մակարդակով, համընդհանուր միջին ցուցանիշը 2020-2030թթ. նվազեցնելով 100 հազարով՝ 2005 -2015թթ. համեմատությամբ⁹,
- (գ) մինչև 2030թ. նվազեցնել աղետների պատճառած ուղղակի տնտեսական վնասը՝ համաշխարհային համախառն ներքին արդյունքի (<ՆԱ) նկատմամբ,
- (դ) մինչև 2030թ. էականորեն կրճատել կարևոր նշանակության ենթակառուցվածքների աղետների պատճառած վնասը և հիմնական ծառայությունների, այդ թվում առողջապահական և կրթական հաստատությունների աշխատանքի խափանումը, որը, այլ միջոցառումների հետ մեկտեղ, կիրականացվի դիմակայունության բարձրացման միջոցով,
- (ե) մինչև 2020թ. էականորեն ավելացնել ազգային և տեղական աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություններ ունեցող երկրների թիվը,
- (զ) մինչև 2030թ. զարգացող երկրներում էականորեն հզորացնել միջազգային համագործակցությունը՝ պատշաճ և կայուն աջակցության միջոցով համալրելու սույն ծրագրի իրագործման ազգային ջանքերը,
- (է) մինչև 2030թ. էականորեն մեծացնել տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի թիվը և հասանելիությունը, ինչպես նաև աղետների ռիսկի մասին տեղեկատվության և գնահատումների հասանելիությունը բնակչությանը:

III. Ուղղորդիչ սկզբունքները

19. Ելնելով «Առավել անվտանգ աշխարհի՝ բնական աղետների կանխման, դրանց պատրաստ լինելու և դրանց նվազեցման մասին ուղենիշները» Յոկոհամայի ռազմավարությունից և դրա գործողությունների ծրագրից¹⁰, ինչպես նաև Հյուսիսի գործողությունների ծրագրից՝ սույն ծրագրի իրականացումը կուղղորդեն ստորև ներկայացված սկզբունքները, որտեղ հաշվի են առնված ազգային առանձնահատկություններն ու ներքին օրենքները, ինչպես նաև համապատասխանությունը ստանձնած միջազգային պարտավորություններին ու հանձնառություններին:

- (ա) Յուրաքանչյուր պետություն ունի աղետների ռիսկի կանխման և նվազեցման առաջնային պարտավորություն, որն իրականացվում է, ի լրումն այլ միջոցառումների, միջազգային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային, անդրսահմանային և երկկողմ համագործակցությունների միջոցով: Աղետների ռիսկի նվազեցումն ընդհանուր մտահոգության առարկա է բոլոր պետությունների համար, և

9 Համաժողովի կողմից հաստատված հետ-Սենդայի աշխատանքների համար կիրականացվի տուժած մարդկանց դասակարգում:

10 A/CONF.172/9, գլուխ I, բանաձև 1, հավելված I.

աղետների ռիսկի նվազեցման ազգային քաղաքականությունների արդյունավետ բարելավումն ու իրականացումը զարգացող պետություններում՝ իրենց պայմաններին և կարողություններին համապատասխան, կարելի է զարգացնել կայուն միջազգային համագործակցության միջոցով:

- (բ) Աղետների ռիսկի նվազեցման իրականացման պարտավորությունները պետք է կիսվեն կենտրոնական կառավարությունների և համապատասխան ազգային իշխանությունների, ոլորտների և շահագրգիռ դերակատարների միջև՝ տվյալ երկրի ներքին պայմաններին և կառավարման համակարգին համահունչ:
- (գ) Աղետների ռիսկի կառավարման նպատակն է պաշտպանել մարդկանց և նրանց ունեցվածքը, առողջությունը, ապրուստը և արտադրական, ինչպես նաև մշակութային ու բնապահպանական ակտիվները՝ միևնույն ժամանակ խրախուսելով և պաշտպանելով մարդու բոլոր իրավունքներն, այդ թվում նաև՝ զարգացման իրավունքը:
- (դ) Աղետների ռիսկի նվազեցումը ենթադրում է ամբողջ հասարակության ներգրավվածությունն ու գործընկերությունը: Այն նաև պահանջում է ԱՄՆ գործընթացներում մասնակցության հնարավորությունների ստեղծում, որը կապահովի մարդկանց ներառական, հասանելի և ոչ խտրական մասնակցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով աղետներից անհամեմատ ավելի շատ տուժածներին, հատկապես ամենաաղքատներին: Գենդերային, տարիքային, հաշմանդամության և մշակութային հարցերը պետք է ներառվեն բոլոր քաղաքականություններում և գործելակերպերում: Այս առումով, պետք է խրախուսել կանանց և երիտասարդների կողմից գործընթացների առաջնորդումը, և պետք է հատուկ ուշադրություն դարձնել քաղաքացիների կազմակերպված կամավորական աշխատանքների զարգացմանը:
- (ե) Աղետների ռիսկի նվազեցման և կառավարման համար անհրաժեշտ է համակարգման մեխանիզմների առկայություն ոլորտների ներսում, դրանց միջև ու բոլոր մակարդակներում համապատասխան շահագրգիռ դերակատարների հետ աշխատելու համար, ինչպես նաև անհրաժեշտ է գործադիր և օրենսդիր բոլոր պետական հաստատությունների լիակատար ներգրավվածությունն ազգային և տեղական մակարդակներում ու պարտականությունների հստակ բաշխումը հանրային և մասնավոր շահագրգիռ դերակատարների, գործարարների և ակադեմիական հաստատությունների միջև, որը կնպաստի փոխօգնության, գործընկերության և փոխլրացման բարենպաստ միջավայրի ստեղծմանը դերերի կատարման, հաշվետվողականության և հետևողականության գործընթացներում:
- (զ) Թեև ազգային կառավարությունների՝ ուղղորդողի և համակարգողի դերը մնում է չափազանց կարևոր, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծել տեղական իշխանություններին և համայնքներին աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում ներգրավելու համար, որը հնարավոր է իրականացնել, ըստ անհրաժեշտության, ի լրումն այլ գործառույթների, ռեսուրսների, խրախուսման միջոցների տրամադրման և որոշումների կայացման պատասխանատվության ապակենտրոնացման միջոցով:
- (է) Աղետների ռիսկի նվազեցման իրականացման համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի մոտեցում, որտեղ հաշվի են առնված բոլոր տարատեսակ վտանգները և որոշումների կայացման ժամանակ ներառված է ռիսկի մասին տեղեկատվություն՝ հիմնված ըստ սեռի, տարիքի և հաշմանդամության խմբավորված թափանցիկ տվյալների վրա: Ռիսկի մասին տվյալները պետք է լինեն հեշտ հասանելի, թարմացված, հասկանալի, գիտականորեն հիմնավորված, ոչ զգայուն և լրացված ավանդական գիտելիքներով:

- (ը) Քաղաքականությունների, պլանների, գործելակերպերի և մեխանիզմների մշակումը, զարգացումը և կիրառումը պետք է ամբողջական լինեն կայուն զարգացման, պարենի անվտանգության ապահովման, կլիմայի և փոփոխականության, շրջակա միջավայրի կառավարման և աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում:
- (թ) Թեև աղետների վտանգը պայմանավորող գործոնները կարող են լինել տեղական, տարածաշրջանային կամ համընդհանուր բնույթի, աղետների ռիսկի գործոններն ունեն տեղական և կոնկրետ առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հասկանալ աղետների ռիսկի նվազեցման գործողություններ սահմանելու համար:
- (ժ) Աղետների ռիսկի գործոնների վերացումը հանրային և մասնավոր ներդրումների միջոցով ծախսային առումով ավելի արդյունավետ է, քան աղետից հետո արձագանքումն ու վերականգնումը, և այն նպաստում է կայուն զարգացման ապահովմանը:
- (հ) Աղետից հետո վերականգնման և վերակառուցման փուլում չափազանց կարևոր է կանխել և նվազեցնել աղետների ռիսկը, որը հնարավոր է իրականացնել ավելի արդյունավետ վերակառուցման և աղետների ռիսկի մասին հանրային իրազեկվածության և գիտելիքների մակարդակի բարձրացման շնորհիվ:
- (լ) Աղետների ռիսկի արդյունավետ կառավարման համար կարևոր նշանակություն ունի արդյունավետ և, ըստ էության, գլոբալ գործընկերության ու միջազգային համագործակցության զարգացումը, այդ թվում՝ զարգացած պետությունների կողմից այլ պետությունների զարգացմանն ուղղված աջակցության իրականացումը:
- (խ) Զարգացող երկրներին, հատկապես ամենաթույլ զարգացած երկրներին, զարգացող փոքր-կղզի պետություններին, ցամաքով շրջապատված զարգացող երկրներին և աֆրիկյան երկրներին, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրներին, որոնց դիմաց ծառայած են կոնկրետ մարտահրավերներ, անհրաժեշտ է համապատասխան պատշաճ, կայուն և պատեհաժամ աջակցության տրամադրում զարգացած երկրների և գործընկերների կողմից, ինչը հնարավոր է իրականացնել ֆինանսական միջոցների, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման միջոցով, որոնք կհարմարեցվեն նշված երկրների կողմից սահմանված կարիքներին և առաջնահերթություններին:

IV. Գործունեության գերակա ուղղությունները

20. Հաշվի առնելով Հյուսիսի գործողությունների ծրագրի իրականացման փորձը՝ ակնկալվող վերջնական արդյունքի և նպատակի իրագործման համար անհրաժեշտ է նպատակաուղղված գործունեություն ծավալել ոլորտների ներսում և դրանց միջև տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ստորև ներկայացված չորս գերակա ուղղություններով՝

1. աղետների ռիսկի գիտակցում,
2. աղետների ռիսկի պետական կառավարման ուժեղացում աղետների ռիսկի հաղթահարման համար,
3. ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայունության հզորացման համար,
4. աղետների պատրաստվածության ամրապնդում՝ արդյունավետ արձագանքում և ավելի արդյունավետ վերականգնում ու վերակառուցում ապահովելու համար:

21. Աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում պետությունները, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունները և այլ համապատասխան շահագրգիռ դերակատարներ պետք է հաշվի առնեն նշված չորս առաջնահերթություններից յուրաքանչյուրում ամրագրված հիմնական գործողությունները և իրականացնեն դրանք ըստ անհրաժեշտության և իրենց կարողություններին ու ազգային օրենքներին ու կանոնակարգերին համահունչ:

22. Աճող գլոբալ փոխադարձ կախվածության և արդյունավետ միջազգային համագործակցության համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ միջազգային միջավայր և դրա իրականացման միջոցներ, ինչը կնպաստի բոլոր մակարդակներում աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների և խրախուսման միջոցների զարգացմանը, հատկապես զարգացող երկրներում:

Գերակա ուղղություն 1. Աղետների ռիսկի գիտակցում

23. Աղետների վտանգնի հաղթահարմանը վերաբերող քաղաքականություններ և գործողությունների պլան մշակելիս պետք է հաշվի առնել աղետների ռիսկի բոլոր բաղադրիչները՝ խոցելիությունը, կարողությունները, մարդկանց և ակտիվների խոցելիությունը սպառնալիքների հանդեպ, վտանգների առանձնահատկությունները, և շրջակա միջավայրի խնդիրները: Նման գիտելիքները կարող են օգտագործվել նախաաղետային ռիսկի գնահատման, կանխարգելման և մեղմացման, ինչպես նաև աղետների արդյունավետ արձագանքման և պատշաճ պատրաստվածության ապահովման համար:

Ազգային և տեղական մակարդակներ

24. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Խրախուսել համապատասխան տվյալների և գործնական տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը, կառավարումը և կիրառումը: Ապահովել տվյալների բաշխումն՝ ըստ անհրաժեշտության հաշվի առնելով օգտատերերի տարբեր բնույթի կարիքները:
- (բ) Խրախուսել ելակետային տվյալների կիրառումն ու ամրապնդումը, և պարբերաբար գնահատել աղետների ռիսկը, խոցելիությունը, կարողությունները, սպառնալիքները, վտանգների առանձնահատկությունները և դրանց հնարավոր հաջորդական ազդեցությունն էկոհամակարգերի վրա, որը պետք է իրականացվի համապատասխան սոցիալական, տարածական և ազգային հանգամանքներին համահունչ:
- (գ) Ըստ անհրաժեշտության մշակել, պարբերաբար թարմացնել և որոշում կայացնողներին, ընդհանուր հանրությանը և աղետների ռիսկի սպառնալիքի տակ գտնվող համայնքներին տրամադրել աղետների ռիսկի մասին տեղայնացված տեղեկատվություն, այդ թվում՝ ռիսկի քարտեզներ, և հնարավորության դեպքում, կիրառել կոնկրետ տեղանքին վերաբերող տարածական տեղեկատվական տեխնոլոգիա:
- (դ) Կանոնավոր կերպով գնահատել, արձանագրել, տեղեկացնել և հանրությանը տրամադրել տեղեկություններ աղետների վսասնների մասին և վերլուծել դրանց ազդեցությունը տնտեսության, սոցիալական, առողջապահական, կրթական, բնապահպանական և մշակութային ժառանգության ոլորտների վրա, այդ տեղեկատվությունը, ըստ հնարավորության պետք է լինի կոնկրետ վտանգների սպառնալիքի և խոցելիության համատեքստում:
- (ե) Վտանգների սպառնալիքի, խոցելիության, ռիսկի, աղետների և վսասնների մասին ոչ խտրական տեղեկատվությունը, ըստ անհրաժեշտության, դարձնել հասանելի և մատչելի:

- (գ) Վստահելի տվյալները դարձնել հասանելի, կիրառել տարածական և իրավիճակային տեղեկատվություն, այդ թվում նաև աշխարհագրական տեղեկատվական համակարգերը, և օգտագործել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարարությունները՝ չափորոշման գործիքները և տվյալների հավաքագրման, վերլուծության ու տարածման գործընթացները զարգացնելու նպատակով:
- (ե) Հարստացնել բոլոր մակարդակների պետական պաշտոնյաների, քաղաքացիական հասարակության, համայնքների և կամավորների, ինչպես նաև մասնավոր ոլորտի ներկայացուցիչների գիտելիքները՝ նրանց հետ կիսելով առկա փորձը, քաղված դասերը, լավագույն գործելակերպի օրինակները, անցկացնել աղետների ռիսկի նվազեցման դասընթացներ, այդ թվում՝ կիրառելով վերապատրաստման և կրթական առկա մեխանիզմներն ու գործընկերային ուսուցման մեթոդները:
- (ը) Խրախուսել և բարելավել գիտական և տեխնոլոգիական ոլորտների, այլ շահագրգիռ դերակատարների և քաղաքականություն մշակողների միջև երկխոսությունն ու համագործակցությունը, ինչը հնարավորություն կտա ստեղծել գիտություն-քաղաքականություն կապը, որն էլ կապահովի աղետների ռիսկի կառավարման ոլորտում արդյունավետ որոշումների կայացման գործընթացը:
- (թ) Ապահովել ավանդական և տեղական գիտելիքների ու գործելակերպի կիրառումը, որը կլրացնի աղետների ռիսկի գնահատման, ինչպես նաև քաղաքականությունների, ռազմավարությունների, պլանների և ծրագրերի մշակման ու իրականացման գիտական իմացությունը: Այս գործընթացն հարկավոր է իրականացնել՝ ապահովելով ոլորտների միջև համապատասխան կապ և հարմարեցնելով գործընթացը կոնկրետ տեղանքների պահանջներին և առանձնահատկություններին:
- (ժ) Ջարգացնել տեխնիկական և գիտական կարողությունները, որը հնարավորություն կտա օգտվել առկա գիտելիքներից և լրացնել այն, ինչպես նաև մշակել և կիրառել աղետների ռիսկի, խոցելիության և բոլոր տեսակի վտանգների սպառնալիքի գնահատման մեթոդաբանություններն ու մոդելներ:
- (ի) Խրախուսել երկարաժամկետ ներդրումները՝ նորարարության ու տեխնոլոգիաների զարգացման, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման ոլորտում հետազոտությունների իրականացման համար, որը հնարավորություն կտա վերլուծել տեղ գտած թերությունները, խոչընդոտները, փոխադարձ կախվածության հարցերը, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, կրթական և բնապահպանական մարտահրավերներն ու աղետների ռիսկը:
- (լ) Խթանել աղետների ռիսկի իմացության, այդ թվում՝ աղետների կանխարգելման, մեղմացման, պատրաստվածության, արձագանքման, և վերականգնման հարցերի ներառումը պաշտոնական և ոչ պաշտոնական կրթության, ինչպես նաև քաղաքացիական կրթության բոլոր մակարդակներում ու մասնագիտական ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:
- (խ) Խրախուսել համապատասխան ազգային ռազմավարությունների իրականացումը քարոզարշավների, սոցիալական լրատվամիջոցների և համայնքների համախմբման միջոցով և հաշվի առնելով կոնկրետ լսարանների կարիքներ՝ աղետների ռիսկի նվազեցման, այդ թվում՝ աղետների ռիսկի մասին տեղեկատվության ու իմացության հանրային կրթության բարելավման և իրազեկման բարձրացման նպատակով:
- (ծ) Կիրառել ռիսկի բոլոր բաղադրիչների (խոցելիություն, կարողություն, մարդկանց, համայնքների, երկրների և ակտիվների խոցելիությունը սպառնալիքների հանդեպ, վտանգների առանձնահատկություններ) մասին տեղեկատվությունն՝ աղետների ռիսկի նվազեցման քաղաքականությունների մշակման և իրականացման համար:

- (կ) Բարելավել մարդկանց միջև համագործակցությունը տեղական մակարդակում համայնքանպաստ և հասարակական կազմակերպությունների միջոցով աղետների ռիսկի մասին տեղեկատվության տարածման համար:

Համընդհանուր և տարածաշրջանային մակարդակներ

25. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Բարելավել աղետների վնասի, համապատասխան տվյալների և վիճակագրության արձանագրման և փոխանակման, ինչպես նաև աղետների ռիսկի մոդելավորման, գնահատման, քարտեզագրման, մշտադիտարկման և տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի զարգացման գիտական մեթոդաբանությունների և գործիքների մշակումն ու տարածումը:
- (բ) Խրախուսել տարատեսակ վտանգներ ներառող աղետների ռիսկի դյուրսում համապարփակ ուսումնասիրությունների իրականացումը և տարածաշրջանային աղետների ռիսկի գնահատումների և քարտեզների, այդ թվում կլիմայի փոփոխության սցենարների մշակումը:
- (գ) Միջազգային համագործակցության, այդ թվում տեխնոլոգիաների փոխանցման միջոցով աջակցել և բարելավել ճշգրիտ տվյալների և տեղեկատվության և, ըստ անհրաժեշտության, նաև հաղորդակցման և երկրաբանական տեխնոլոգիաների և ծառայությունների հասանելիությունը, փոխանակումն ու օգտագործումը: Շահագործել և հզորացնել երկրի և կլիմայի հեռակառավարվող հետազոտությունները: Ազգային օրենքներին համապատասխան և ըստ անհրաժեշտության հզորացնել լրատվամիջոցների, այդ թվում սոցիալական և ավանդական լրատվամիջոցների, ծավալուն տվյալների փոխանակման և բջջային հեռախոսների ցանցերի շահագործումը, որը կնպաստի աղետների ռիսկի մասին արդյունավետ հաղորդակցության իրականացմանը:
- (դ) Խթանել գիտական և տեխնոլոգիական, ակադեմիական և մասնավոր դյուրսների միջև գործընկերությունը, որը հնարավորության կտա ձեռք բերել լավագույն փորձը և տարածել այն միջազգային համայնքում:
- (ե) Աջակցել տեղական, ազգային, տարածաշրջանային և համընդհանուր հեշտ կիրառելի համակարգերի և ծառայությունների ստեղծմանը, որոնք կօգտագործվեն լավագույն փորձի, ծախսային առումով արդյունավետ և հեշտ կիրառելի աղետների ռիսկի նվազեցման տեխնոլոգիաների, ինչպես նաև քաղաքականությունների իրականացման ընթացքում քաղված դասերի և աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար:
- (զ) Մշակել քարոզարշավներ, որպես հանրային իրազեկվածության բարձրացման և ուսուցման համընդհանուր և տարածաշրջանային արդյունավետ գործիքներ՝ հիմնվելով արդեն իսկ գոյություն ունեցող գործիքների վրա (օրինակ՝ «Մեկ միլիոն անվտանգ դպրոցներ և հիվանդանոցներ» նախաձեռնությունը, «Դարձնենք քաղաքները դիմակայուն. իմ քաղաքը պատրաստվում է» քարոզարշավը, Միավորված ազգերի կազմակերպության աղետների նվազեցման Սասակավայի պարզ-կատրումը և Միավորված ազգերի կազմակերպության աղետների նվազեցման միջազգային օրը, որը նշվում է տարեկան կտրվածքով): Վերոնշյալ գործիքների զարգացումը կնպաստի աղետների կանխարգելման, դիմակայունության հզորացման և պատասխանատվության ձևավորման մշակույթի ստեղծմանը, կաջակցի աղետների ռիսկի ըմբռնմանը, փոխադարձ ուսուցմանը և փորձի փոխանակմանը: Խրախուսել նաև հանրային և մասնավոր դյուրսների շահագրգիռ դերակատարներին ակտիվորեն ընդգրկվելու նմանատիպ նախաձեռնությունների իրականացման գործընթացում և մշակելու նոր ծրագրեր՝ տեղական, ազգային,

տարածաշրջանային և համընդհանուր մակարդակներում իրականացնելու համար:

- (ե) Հզորացնել աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ տարվող գիտական և տեխնիկական աշխատանքները, որը հնարավոր է իրականացնել համակարգելով բոլոր մակարդակներում և տարածաշրջաններում գոյություն ունեցող ցանցերի և գիտական հետազոտական ինստիտուտների գործունեությունը: Վերոնշյալի իրագործմանը կարող է աջակցել UNISDR գրասենյակի (Միավորված ազգերի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գրասենյակ) Գիտական և տեխնիկական խորհրդատվական խումբը, նպաստակ ունենալով՝
- հզորացնելու տվյալների բազան՝ ի նպաստ այս ծրագրի իրականացմանը,
 - խթանելու աղետների ռիսկի պատկերի, պատճառների և ազդեցության գիտական հետազոտումը,
 - տարածելու ռիսկի մասին տեղեկատվություն՝ երկրաբանական լավագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ,
 - ուղղորդելու ռիսկի գնահատման, աղետների ռիսկի մոդելավորման և տվյալների օգտագործման մեթոդաբանությունների և չափանիշների կիրառման գործընթացները,
 - բացահայտելու հետազոտական և տեխնոլոգիական բացերը և տրամադրելու համապատասխան առաջարկներ՝ աղետների ռիսկի նվազեցման հետազոտության առաջնային ոլորտների համար,
 - խթանելու և աջակցելու գիտական և տեխնոլոգիական մոտեցումների կիրառումը որոշումների կայացման գործընթացում,
 - նպաստելու աղետների ռիսկի նվազեցման UNISDR 2009թ. տերմինաբանության թարմացմանը,
 - օգտագործելու հետադետային ուսումնասիրությունները՝ որպես դասեր քաղելու և քաղաքականություններ մշակելու հնարավորություն,
 - տարածելու ուսումնասիրությունները:
- (ը) Խրախուսել հեղինակային և արտոնագրված նյութերի հասանելիությունը, այդ թվում՝ բանակցային զիջումների միջոցով:
- (թ) Նորարարությունների և տեխնոլոգիաների կիրառումը դարձնել ավելի մատչելի ու աջակցել դրանց զարգացմանը, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման ոլորտում զարգացնել երկարաժամկետ, տարատեսակ վտանգների համար նախատեսված և լուծումների վրա հիմնված հետազոտությունները:

Գերակա ուղղություն 2. Աղետների ռիսկի պետական կառավարման հզորացում՝ ի նպաստ աղետների ռիսկի կառավարման զարգացման

26. Ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում աղետների ռիսկի պետական կառավարումը կարևոր դեր է կատարում աղետների ռիսկի արդյունավետ կառավարման հարցում: Ոլորտների ներսում և դրանց միջև անհրաժեշտ է հստակ պատկերացնել գործընթացը, ունենալ պլաններ, համապատասխան մասնագիտական կարողություններ, իրականացնել ուղղորդող և համակարգման աշխատանքներ, ինչպես նաև ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը: Այսպիսով, կանխարգելման, մեղմացման, պատրաստվածության, արձագանքման, վերականգնման և վերակառուցման համար աղետների ռիսկի կառավարման հզորացումն անհրաժեշտ է, քանի որ այն կնպաստի աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման իրականացման համար համապատասխան հաստատությունների միջև համագործակցության և գործընկերության ապահովմանը:

Ազգային և տեղական մակարդակներ

27. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Աղետների ռիսկի նվազեցումն ընդգրկել և ներառել բոլոր ոլորտներում: Վերանայել ազգային և տեղական օրենքները, կանոնակարգերը և հանրային քաղաքականությունները և, ըստ անհրաժեշտության, աջակցել դրանց հետագա զարգացմանը: Դրանք, սահմանելով դերերն ու պարտականությունները, ուղղորդում են հանրային և մասնավոր ոլորտներին կատարելու հետևյալը. (I) ներառել աղետների ռիսկի նվազեցումը հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների ոլորտներում, (II) աջակցել և խրախուսել մարդկանց, տնտեսվարողների, համայնքների և ձեռնարկատերերի գործողությունների իրականացումը, (III) բարելավել աղետների ռիսկի մասին տեղեկատվության թափանցիկության ապահովման համապատասխան մեխանիզմները և նախաձեռնությունները, որոնց թվին են պատկանում ֆինանսական խրախուսման միջոցները, հանրային իրազեկման բարձրացումը և վերապատրաստումը, հաշվետվության պահանջներն ու իրավական, վարչական միջոցները, և (IV) ներդնել համակարգման և կազմակերպչական մեխանիզմներ:
- (բ) Ընդունել և իրականացնել համապատասխան թիրախներ, ցուցանիշներ և ժամկետներ ունեցող աղետների ռիսկի նվազեցման ազգային և տեղական ռազմավարություններ և գործողությունների պլաններ, որոնք նպատակաուղղված են ռիսկի առաջացման կանխմանը, գոյություն ունեցող ռիսկի նվազեցմանը և տնտեսական, սոցիալական, առողջապահական և բնապահպանական դիմակայունության հզորացմանը:
- (գ) Գնահատել աղետների ռիսկի կառավարման տեխնիկական, ֆինանսական և վարչական կարողությունները, ինչն անհրաժեշտ է տեղական և ազգային մակարդակներում ռիսկերի կառավարման համար:
- (դ) Խթանել ոլորտային օրենքների և կանոնակարգերի՝ անվտանգությանը վերաբերող դրույթների կատարման համար անհրաժեշտ մեխանիզմների և դրդապատճառների ստեղծումը, այդ թվում այն դրույթների, որոնք վերաբերում են հողօգտագործման և քաղաքաշինության պլանավորմանը, շինարարական կոդերին, բնապահպանական ռեսուրսների կառավարմանը, առողջապահական և անվտանգության չափանիշներին: Վերոնշյալ դրույթները հարկավոր է, ըստ անհրաժեշտության, վերանայել՝ ապահովելով պատշաճ ուշադրություն աղետների ռիսկի կառավարման հարցերին:
- (ե) Մշակել և զարգացնել պարբերական գնահատման մեխանիզմներ և հանրությանը հաշվետվություն ներկայացնել ազգային և տեղական ծրագրերի իրականացման առաջընթացի վերաբերյալ: Խրախուսել ԱՌՆ տեղական և ազգային ծրագրերի իրականացման առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների հասարակական վերահսկումը և հաստատութենական բանավեճերը, այդ թվում՝ պատգամավորների և համապատասխան այլ պաշտոնյաների կողմից:
- (զ) Համապատասխան իրավական ակտերի միջոցով հստակ դերեր և հանձնարարականներ սահմանել աղետների ռիսկի կառավարման ոլորտի համայնքային ներկայացուցիչների և որոշումներ կայացնողների համար: Նման օրենքների և կանոնակարգերի մշակման ժամանակ, անցկացնել համապարփակ հանրային և համայնքային խորհրդակցություններ՝ ի նպաստ դրանց կատարմանը:
- (է) Ազգային և տեղական մակարդակներում համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպել պետական համակարգման ֆորումներ՝ ինչպիսիք են, օրինակ աղետների ռիսկի նվազեցման ազգային և տեղական պլատֆորմները, և նշանակել ՀԳԾ-15 իրականացման համակարգող անձ: Անհրաժեշտ է, որ նման մեխանիզմները դրվեն ամուր հիմքերի վրա, պարտականությունները

հստակ սահմանվեն և ունենան համապատասխան լիազորություններ՝ սահմանելու ոլորտային և միջոլորտային աղետների ռիսկը, բարձրացնելու հանրության իրազեկվածությունը և հարստացնելու աղետների ռիսկի վերաբերյալ գիտելիքները ԱՌՆ տվյալների և տեղեկատվության տարածման միջոցով, նպաստելու տեղական և ազգային աղետների ռիսկի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացմանը, համակարգելու աղետների ռիսկի վերաբերյալ հանրային իրազեկման քարոզարշավները, աջակցելու տեղական մակարդակում բազմոլորտ համակարգման գործընթացին (օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների միջև), նպաստելու ազգային և տեղական մակարդակներում աղետների ռիսկի կառավարման ծրագրերի և բոլոր ԱՌԿ քաղաքականությունների մշակմանն ու դրանց իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացմանը: Այս պարտականությունները պետք է սահմանվեն օրենքների, կանոնակարգերի, համապատասխան չափանիշների և ընթացակարգերի միջոցով:

- (ը) Օրենսդրական և ֆինանսական միջոցներով հնարավորություններ ստեղծել տեղական իշխանությունների համար աշխատել քաղաքացիական հասարակության, համայնքների և բնիկ ժողովուրդների ու փախստականների հետ աղետների ռիսկի կառավարման հիմնահարցերի շուրջ:
- (թ) Խրախուսել պատգամավորներին աջակցելու աղետների ռիսկի նվազեցման իրականացմանը նոր օրենսդրության մշակման կամ համապատասխան օրենքների վերանայման և բյուջետային հատկացումների միջոցով:
- (ժ) Աջակցել որակական չափանիշների մշակմանը, ինչպիսիք են՝ աղետների ռիսկի կառավարման ոլորտում հավաստագրումների և պարզկների տրամադրումը: Գործընթացի մասնակիցներն են մասնավոր ոլորտը, քաղաքացիական հասարակությունը, մասնագիտացված ընկերությունները, գիտական կազմակերպությունները և Միավորված ազգերի կազմակերպությունը:
- (ի) Եթե կիրառելի է, մշակել հանրային քաղաքականություններ՝ աղետների ռիսկի կանխարգելման խնդիրների կամ, ըստ հնարավորության, աղետավտանգ գոտիներից բնակավայրերի տեղափոխման վերաբերյալ (ազգային օրենքներին և իրավական համակարգին համահունչ):

Համընդհանուր և տարածաշրջանային մակարդակներ

28. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ համաձայնեցված համագործակցության ռազմավարությունների և մեխանիզմների միջոցով ուղղորդել գործողությունները տարածաշրջանային մակարդակում սույն ծրագրին համահունչ, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ պլանավորել, ստեղծել ընդհանուր տեղեկատվական համակարգեր և փոխանակել համագործակցության և կարողությունների զարգացման լավագույն փորձն ու ծրագրերը՝ մասնավորապես անդրադառնալով ընդհանուր և անդր-սահմանային աղետների ռիսկին:
- (բ) Աջակցել համընդհանուր և տարածաշրջանի համապատասխան հաստատությունների միջև համագործակցության ստեղծմանը, որը կնպաստի աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերող գործիքների և մեխանիզմների կիրառմանն ու համապատասխանեցմանը, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանությունը, կայուն զարգացումը, աղքատության վերացումը, բնապահպանական, գյուղատնտեսական, առողջապահական, պարենի, ռացիոնալ սննդի և այլ հիմնախնդիրները:
- (գ) Ակտիվ մասնակցություն ցուցաբերել աղետների ռիսկի նվազեցման համընդհանուր պլատֆորմի, աղետների ռիսկի նվազեցման տարածաշրջանային և ենթա-

տարածաշրջանային, ինչպես նաև թեմատիկ պլատֆորմների աշխատանքներին, որը հնարավորություն կտա ստեղծել գործընկերական կապեր, պարբերաբար գնահատել առաջընթացը, իրականացնել փորձի և գիտելիքների փոխանակում՝ ծրագրերի, ներդրումների և քաղաքականությունների, այդ թվում՝ զարգացման և կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների վերաբերյալ: Խրախուսել աղետների ռիսկի կառավարման ներառումը համապատասխան այլ ոլորտների գործունեության մեջ: Տարածաշրջանային միջկառավարական կազմակերպությունները պետք է կարևոր դեր ստանձնեն աղետների ռիսկի նվազեցման տարածաշրջանային պլատֆորմների աշխատանքում:

- (դ) Աջակցել անդրսահմանային համագործակցության ստեղծմանը, որը հնարավորություն կտա քաղաքականությունների իրականացման և պլանավորման միջոցով ընդհանուր ռեսուրսներով լուծել էկոհամակարգերի հետ կապված խնդիրները, ինչպիսիք են՝ դիմակայունության ամրապնդումը և աղետների ռիսկի նվազեցումը գետերի ավազաններում և ափամերձ տարածքներում, այդ թվում՝ համաճարակների տարածումը և տարհանման ռիսկը:
- (ե) Խրախուսել փոխադարձ ուսուցումը և լավագույն փորձի ու տեղեկատվության փոխանակումը՝ հետաքրքրված պետությունների միջև կամավոր և սեփական նախաձեռնությամբ իրականացվող ուսումնասիրությունների միջոցով (բացի այլ միջոցներից):
- (զ) Ըստ անհրաժեշտության, աջակցել միջազգային կամավորական մեխանիզմների հզորացմանը, որը կօգնի վերահսկել և գնահատել աղետների ռիսկը, համապատասխան տվյալներն ու տեղեկությունները, որոնք հնարավոր է ստանալ Հյուգոյի գործողությունների ծրագրի մշտադիտարկման գործիքի միջոցով: Նշված մեխանիզմները կարող են նպաստել աղետների ռիսկի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության հաղորդմանն ազգային պետական մարմիններին և շահագրգիռ կողմերին՝ ի նպաստ կայուն սոցիալական և տնտեսական զարգացման:

Գերակա ուղղություն 3. Ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայունության հզորացման համար

29. Պետական և մասնավոր ներդրումներն աղետների ռիսկի կանխարգելման և նվազեցման ոլորտում կառուցվածքային և ոչ կառուցվածքային միջոցների օգնությամբ կարևոր են մարդկանց, համայնքների, պետությունների և իրենց ակտիվների տնտեսական, սոցիալական, առողջապահական և մշակութային, ինչպես նաև բնապահպանական դիմակայունության բարձրացման համար: Ներդրումները կարող են նորարարության, առաջընթացի և աշխատատեղերի ստեղծման գործոն հանդիսանալ: Նման միջոցները ծախսային առումով արդյունավետ են և կարևորագույն դեր են խաղում մարդկային կյանք փրկելու, աղետների վնասների կանխման ու նվազեցման գործում, ինչպես նաև ապահովում են արդյունավետ վերականգնում և վերակառուցում:

Ազգային և տեղական մակարդակներ

30. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունների, քաղաքականությունների, պլանների, օրենքների և կանոնակարգերի մշակման և իրականացման համար համապատասխան ոլորտներին վարչարարության բոլոր մակարդակներում հատկացնել անհրաժեշտ ռեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական և նյութատեխնիկական, ըստ անհրաժեշտության:
- (բ) Աջակցել համապատասխան մեխանիզմների ստեղծմանը, որոնք հնարավորություն կտան ապահովել աղետների ռիսկի ապահովագրություն, ռիսկի հնարավոր վնասների ապահովագրում և ֆինանսական պաշտպանություն պետական և

մասնավոր ներդրումների համար, ինչը կկրճատի քաղաքային և գյուղական տարածքներում կառավարման մարմինների և հասարակության վրա ընկնող աղետների ֆինանսական ազդեցության բեռը:

- (գ) Զարգացնել, ըստ անհրաժեշտության, աղետակայունության բարձրացմանն ուղղված պետական և մասնավոր ներդրումները, մասնավորապես հետևյալ միջոցներով՝ աղետների ռիսկի կանխարգելման և նվազեցման կառուցվածքային, ոչ կառուցվածքային և գործառնական միջոցառումների իրականացում կարևոր նշանակության հաստատություններում, հատկապես դպրոցներում, հիվանդանոցներում և ֆիզիկական ենթակառուցվածքներում, ի սկզբանե պատշաճ նախագծում և կառուցում, այդ թվում վտանգներին դիմակայելու համար միջազգային նախագծման սկզբունքների և շինարարական չափանիշների օգտագործում, վերանորոգում և վերակառուցում, պահպանման մշակույթի ստեղծում և տնտեսական, սոցիալական, կառուցվածքային, տեխնոլոգիական և բնապահպանական ազդեցությունների գնահատման քննարկում:
- (դ) Պահպանել կամ աջակցել մշակութային և այլ պատմական նշանակություն ունեցող, մշակութային ժառանգություն հանդիսացող կամ կրոնական հետաքրքրություն ներկայացնող կառույցների ու տեղանքների պահպանմանը:
- (ե) Խրախուսել աղետների ռիսկի դիմակայունության բարձրացումն աշխատավայրերում՝ կառուցվածքային և ոչ կառուցվածքային միջոցների օգնությամբ:
- (զ) Հողօգտագործման քաղաքականությունների մշակման և իրականացման ընթացքում, այդ թվում քաղաքաշինության պլանավորման, հողի դեգրադացման գնահատման և ոչ մշտական բնակարանաշինության գործընթացներում գնահատել աղետների ռիսկը և կիրառել համապատասխան ուղղորդիչ և վերահսկողության գործիքներ, որոնք հնարավորություն կտան նաև ներկայացնել ակնկալվող ժողովրդագրական և բնապահպանական փոփոխությունները:
- (է) Գյուղական վայրերի զարգացման պլաններում և լեռների, գետերի, ափամերձ հեղեղվող տարածքների, չոր և խոնավ հողատարածքների, երաշտի ու հեղեղումների սպառնալիքի տակ գտնվող բոլոր այլ տարածքների կառավարման գործընթացներում ներառել աղետների ռիսկի գնահատումը, քարտեզագրումը և կառավարումը: Ավելին, բացահայտել մարդկանց բնակության համար անվտանգ տարածքները՝ միևնույն ժամանակ պահպանելով էկոհամակարգի գործառույթները, որոնք նպաստում են ռիսկերի նվազեցմանը:
- (ը) Խրախուսել նոր շինարարական կողերի, չափանիշների, վերականգնման և վերակառուցման գործելակերպերի ստեղծումը/զարգացումը կամ գոյություն ունեցողների վերանայումն ազգային կամ տեղական մակարդակներում, որի նպատակն է դրանք դարձնել ավելի գործնական, կիրառելի տեղական համատեքստում, հատկապես աղքատ և հեռավոր բնակավայրերում, և հզորացնել նշված կողերի կիրառման և ուսումնասիրման կարողությունները: Վերոնշյալի վերջնական նպատակն է կիրառել պատշաճ մոտեցում և ապահովել աղետակայուն կառույցներ:
- (թ) Բարելավել ազգային առողջապահական համակարգերի դիմակայունությունը հետևյալ միջոցներով. Ներառել աղետների ռիսկի կառավարումն առաջնային, երկրորդային և երրորդային առողջապահության մեջ, հատկապես տեղական մակարդակում, հարստացնել առողջապահության ոլորտի աշխատակիցների աղետների ռիսկին վերաբերող գիտելիքները և կիրառել աղետների ռիսկի նվազեցման մոտեցումներն աշխատանքային գործընթացներում, աջակցել և զարգացնել աղետների ժամանակ բժշկական օգնության կարողությունների զարգացման վերաբերյալ իրականացվող դասընթացները, և աջակցել ու վերապատրաստել առողջապահության ոլորտի համայնքային ներկայացուցիչներին

աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ, որը կարելի է իրականացնել այլ ոլորտների հետ համագործակցությամբ, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջազգային առողջապահական կանոնների (2005թ.) կիրառմամբ:

- (ժ) Ամրապնդել ներառական քաղաքականությունների և սոցիալական անվտանգության մեխանիզմների մշակումն ու իրականացումը՝ համայնքներին ընդգրկելով գործընթացի մեջ, և ներառել այդ մեխանիզմները կյանքի պայմանների բարելավման ծրագրերում: Դրանց միջոցով ապահովել հիմնական առողջապահական ծառայությունների, այդ թվում՝ մայրական, նորածինների և երեխաների առողջության, սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիությունը, պարենի անվտանգությունը և ռացիոնալ սնուցումը, բնակարանաշինությունը և կրթությունը, որի նպատակն է վերացնել աղքատությունը, հետադեպային փուլում գտնել կայուն լուծումներ և աջակցել աղետներից անհամասնորեն տուժած մարդկանց:
- (ի) Կյանքին վտանգ սպառնացող և քրոնիկ հիվանդություններով տառապող մարդիկ, ովքեր ունեն որոշակի կարիքներ պետք է ներառվեն քաղաքականությունների և պլանների մշակման գործընթացներում, որպեսզի հնարավորություն ունենան կառավարելու իրենց ռիսկերն աղետներից առաջ, աղետների ընթացքում և աղետներից հետո, այդ թվում՝ նաև ապահովելով կյանքի փրկության համար անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը:
- (լ) Խրախուսել այնպիսի քաղաքականությունների ու ծրագրերի ընդունումը, որոնք ներառում են մարդկանց տեղաշարժման հետ կապված խնդիրներ, ինչը հնարավորություն կտա ամրապնդել աղետից տուժած մարդկանց և համայնքների դիմակայունությունն ազգային օրենքներին և հանգամանքներին համահունչ:
- (խ) Ըստ անհրաժեշտության խրախուսել աղետների ռիսկի նվազեցման խնդիրների և չափորոշիչների ներառումը ֆինանսական և հարկաբյուջետային գործիքներում:
- (ծ) Ամրապնդել էկոհամակարգերի կայուն օգտագործումն ու կառավարումը և իրականացնել բնապահպանական ու բնական պաշարների կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք ներառում են աղետների ռիսկի նվազեցման հարցեր:
- (կ) Բարձրացնել գործարար ոլորտի դիմակայունությունը և մատակարարողների արտադրական ակտիվների պաշտպանությունը: Ապահովել ծառայությունների մատուցման շարունակականությունը և ներառել աղետների ռիսկի կառավարումը գործարար ոլորտում:
- (հ) Հզորացնել ապրուստի և արտադրական ակտիվների, այդ թվում անասունների, բանող կենդանիների, գործիքների և սերմերի պաշտպանությունը:
- (ձ) Աջակցել և ներառել աղետների ռիսկի կառավարումը զբոսաշրջության ոլորտում, հաշվի առնելով այն փաստը, որ հաճախ տնտեսության զարգացման հիմնական գործոնը, մեծ հաշվով, հանդիսանում է զբոսաշրջությունը:

Համընդհանուր և տարածաշրջանային մակարդակներ

31. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Ապահովել կայուն զարգացման և աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ աշխատող համակարգերի, ոլորտների և կազմակերպությունների քաղաքականությունների, պլանների, ծրագրերի և գործընթացների համապատասխանությունը:

- (բ) Խթանել աղետների ռիսկի ապահովագրման մեխանիզմների և գործիքների զարգացումը և հզորացումը՝ միջազգային համայնքի, գործարար ոլորտի, միջազգային ֆինանսական հաստատությունների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցության միջոցով:
- (գ) Խթանել համագործակցությունը ակադեմիական, գիտական և հետազոտական հաստատությունների, ցանցերի և մասնավոր ոլորտի միջև, որը հնարավորություն կտա ստեղծել նոր ապրանքներ և ծառայություններ, որոնք կնպաստեն աղետների ռիսկի նվազեցմանը և կաջակցեն զարգացող երկրներին՝ իրենց հատուկ մարտահրավերները հաղթահարելու գործում:
- (դ) Խրախուսել համակարգումը գլոբալ և տարածաշրջանային ֆինանսական հաստատությունների միջև՝ նպատակ ունենալով գնահատել և կանխատեսել աղետների տնտեսական և սոցիալական ազդեցությունները:
- (ե) Հզորացնել համակարգումը առողջապահական կազմակերպությունների և այլ համապատասխան շահագրգիռ դերակատարների միջև, որը կնպաստի երկրի առողջապահական ոլորտում աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանը, միջազգային առողջապահական կանոնների իրագործմանը և դիմակայուն առողջապահական համակարգերի ստեղծմանը:
- (զ) Հզորացնել և խթանել համագործակցությունը և կարողությունների զարգացումն՝ ապրուստի և արտադրական ակտիվների, այդ թվում՝ անասունների, բանող կենդանիների, գործիքների և սերմերի պաշտպանության ապահովման համար:
- (է) Խթանել և աջակցել սոցիալական անվտանգության ցանցերի ստեղծմանը, որպես աղետների ռիսկի նվազեցման միջոց, որոնք կապված կլինեն զարգացման ծրագրերի հետ՝ նպատակ ունենալով ապահովելու տնային տնտեսությունների և համայնքների դիմակայունությունը:
- (ը) Հզորացնել և ընդլայնել աղետների ռիսկի նվազեցման միջոցով սովի և աղքատության վերացմանն ուղղված միջազգային ջանքերը:
- (թ) Խթանել և աջակցել համապատասխան հանրային և մասնավոր ոլորտի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ստեղծմանը՝ նպատակ ունենալով հզորացնելու գործարար ոլորտի դիմակայունությունը աղետների նկատմամբ:

Գերակա ուղղություն 4. Աղետների պատրաստվածության ամրապնդում արդյունավետ արձագանքման համար և «Անել ավելին, քան արվում է» սկզբունքի ներդրում վերականգնման, վերականգնողական և վերակառուցման բնագավառներում

32. Աղետների ռիսկի կայուն աճը, մարդկանց և ակտիվների նկատմամբ սպառնալիքի մեծացումը և անցյալից քաղված դասերը ցույց են տալիս, որ անհրաժեշտ է էլ ավելի ամրապնդել աղետների արձագանքման պատրաստվածությունը, ձեռնարկել կանխարգելիչ գործողություններ, ներառել աղետների ռիսկի նվազեցումն արձագանքման պատրաստվածության գործընթացում և ապահովել համապատասխան կարողություններ բոլոր մակարդակներում արդյունավետ արձագանքման և վերականգնման գործողություններ իրականացնելու համար: Կարևոր է նաև հնարավորություններ ստեղծել կանանց և հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ապահովելու զենդերային առումով հավասար և բոլորի համար հասանելի արձագանքում, վերականգնում և վերակառուցում: Այս գործընթացը հարկավոր է պլանավորել մինչ աղետը, որը շատ կարևոր է ավելի արդյունավետ վերականգնման և վերակառուցման համար: Վերոնշյալի իրականացման համար հարկավոր է նաև աղետների ռիսկի նվազեցումը ներառել զարգացման գործընթացներում՝ երկրներն ու համայնքները դարձնելով դիմակայուն:

Ազգային և տեղական մակարդակներ

33. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Համապատասխան հաստատությունների մասնակցությամբ մշակել կամ վերանայել և պարբերաբար թարմացնել աղետների պատրաստվածության և արձագանքման քաղաքականությունները, պլաններն ու ծրագրերը՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության սցենարները և դրանց ազդեցություններն աղետների ռիսկի վրա: Այս գործընթացում, ըստ անհրաժեշտության, ապահովել բոլոր ոլորտների և համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցությունը:
- (բ) Կատարել ներդրումներ, ստեղծել, շահագործել և զարգացնել մարդակենտրոն, տարատեսակ վտանգների համար նախատեսված և բազմոլորտ կանխատեսման և վաղ ազդարարման համակարգեր, աղետների ռիսկի և արտակարգ իրավիճակների հաղորդակցման մեխանիզմներ, սոցիալական տեխնոլոգիաներ և վտանգների մշտադիտարկման հեռահաղորդակցման համակարգեր: Նման համակարգերը հարկավոր է ստեղծել մասնակցային գործընթացի միջոցով, ինչպես նաև հարմարեցնել դրանք օգտատերերի կարիքներին՝ հաշվի առնելով սոցիալական և մշակութային պահանջները, մասնավորապես՝ գենդերային հարցերը: Խթանել պարզ և քիչ ծախսատար վաղ ազդարարման սարքավորումների կիրառումը և ընդլայնել բնական աղետների մասին վաղ ազդարարման տեղեկատվության տարածումը:
- (գ) Նպաստել նոր և զոյություն ունեցող կարևոր նշանակության ենթակառուցվածքների, այդ թվում՝ ջրային ռեսուրսների, տրանսպորտի և հեռահաղորդակցման համակարգերի, կրթական հաստատությունների, հիվանդանոցների և այլ առողջապահական հաստատությունների դիմակայունության բարձրացմանը, որը կապահովի դրանց անվտանգությունը և արդյունավետ գործունեությունն աղետների ժամանակ և աղետներից հետո, ինչն էլ հնարավոր կդարձնի կյանքի փրկության համար անհրաժեշտ կարևորագույն ծառայությունների մատուցումը:
- (դ) Հիմնել համայնքային կենտրոններ՝ հանրային իրազեկման և փրկարար ու վերականգնողական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութերի պահեստավորման նպատակով:
- (ե) Հաստատել հանրային քաղաքականություններ և միջոցառումների ծրագիր, որը հնարավորություն կտա պետական ծառայողներին հիմնելու կամ ամրապնդելու վերականգնմանն ուղղված աջակցության իրականացման համակարգման և ֆինանսավորման մեխանիզմներն և ընթացակարգերը, ինչպես նաև պլանավորելու հետադետային վերականգնման ու վերակառուցման աշխատանքները և պատրաստվելու դրանց իրագործմանը:
- (զ) Վերապատրաստել առկա աշխատուժն ու կամավորներին աղետների արձագանքման ուղղությամբ և հզորացնել տեխնիկական և լոգիստիկ կարողություններն՝ արտակարգ իրավիճակներում ավելի արդյունավետ արձագանքում ապահովելու համար:
- (է) Ապահովել հետադետային գործառույթների և պլանավորման, այդ թվում՝ սոցիալական և տնտեսական վերականգնման և հիմնական ծառայությունների մատուցման շարունակականությունը:
- (ը) Խթանել աղետների պատրաստվածության, արձագանքման և վերականգնման կանոնավոր վարժանքների, այդ թվում՝ տարիանման ուսումնավարժանքների և վերապատրաստումների իրականացումը, որի նպատակն է ապահովել աղետների արագ և արդյունավետ արձագանքումն ու տարիանումը, ինչպես նաև տեղական կարիքներին համապատասխան անվտանգ կացարանների, առաջին անհրաժեշտության պարենային և ոչ-պարենային վերականգնողական պաշարների ստեղծումը:

- (թ) Խթանել տարբեր հաստատությունների, իշխանությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տուժած համայնքների համագործակցությունը բոլոր մակարդակներում, որն անհրաժեշտ է իրականացնել, ելնելով հետադետային վերակառուցման բարդ և ծախսատար բնույթից:
- (ժ) Խթանել աղետների ռիսկի կառավարման ներառումը հետադետային վերականգնման գործընթացում, նպաստել վերականգնման և զարգացման միջև կապի ստեղծմանը: Օգտագործել վերականգնման փուլում առաջ եկած հնարավորությունները զարգացնելու աղետների ռիսկի նվազեցման կարողությունները կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով: Սա հնարավոր է իրականացնել նաև այնպիսի միջոցառումների զարգացմամբ, ինչպիսիք են՝ հողօգտագործման պլանավորումը, կառուցվածքային չափանիշների բարելավումը և փորձի, գիտելիքների, հետադետային ուսումնասիրությունների և քաղված դասերի փոխանակումը: Ներառել հետադետային վերակառուցման գործընթացները տուժած տարածքների սոցիալական կայուն զարգացման ծրագրերում: Սա պետք է վերաբերի նաև ժամանակավոր կացարաններին, որոնք նախատեսված են աղետի պատճառով տեղահանված մարդկանց համար:
- (հ) Մշակել աղետներից հետո վերակառուցման պատրաստվածության ուղեցույց, որտեղ ներկայացված կլինեն, օրինակ, հողօգտագործման պլանավորման և կառուցվածքային չափանիշների բարելավման ուղիները: Ուղեցույցի մշակման ժամանակ հաշվի առնել Հյոգոյի գործողությունների ծրագրի ընդունումից ի վեր վերջին տասնամյակում իրականացված վերականգնման և վերակառուցման ծրագրերից քաղված դասերը, փորձի և գիտելիքների փոխանակման արդյունքները:
- (լ) Հնարավորության դեպքում, հետադետային վերակառուցման գործընթացի ժամանակ քննարկել հանրային հաստատությունների և ենթակառուցվածքների ռիսկի գոտիներից դուրս տեղափոխման հարցը՝ խորհրդակցելով շահառուների հետ:
- (խ) Ամրապնդել տեղական իշխանությունների աղետավտանգ գոտիներում բնակվող մարդկանց տեղահանելու կարողությունները:
- (ծ) Ստեղծել աղետներից առաջացած մահացության մասին գրանցման մեխանիզմ և տվյալների բազա, որը հնարավորություն կտա բարելավել հիվանդացության և մահացության կանխման գործընթացը:
- (կ) Բարելավել վերականգնողական միջոցառումները և ապահովել հոգեբանական աջակցություն և մտավոր առողջության հետ կապված համապատասխան ծառայություններ՝ դրանց կարիքն ունեցող բոլոր մարդկանց համար:
- (հ) Ըստ հնարավորության, վերանայել և ամրապնդել միջազգային համագործակցության վերաբերյալ ազգային օրենքներն ու ընթացակարգերը՝ դրանք ավելի կիրառելի դարձնելու և աղետներից վերականգնման ու միջազգային աջակցության կանոնակարգման համար:

Գլոբալ և տարածաշրջանային մակարդակներ

34. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Ըստ հնարավորության մշակել և հզորացնել համակարգված տարածաշրջանային մոտեցումներ և գործնական մեխանիզմներ, որոնք կնպաստեն աղետների արագ և արդյունավետ արձագանքմանն այնպիսի դեպքերում, երբ ազգային կարողությունները չեն բավականացնում հաղթահարելու առաջացած իրավիճակը:

- (բ) Խթանել համապատասխան գործիքների, այդ թվում՝ չափանիշների, կողերի, գործողությունների ուղեցույցների և այլ ուղղորդիչ գործիքների հետագա զարգացումն ու տարածումը, որոնք անհրաժեշտ են աղետների պատրաստվածության և արձագանքման գործընթացները համակարգված իրականացնելու համար: Խրախուսել քաղված դասերի և քաղաքականությունների իրականացման լավագույն գործելակերպերի, ինչպես նաև հետադետային վերակառուցման ծրագրերի մասին տեղեկատվության փոխանակումը:
- (գ) Խթանել, ըստ անհրաժեշտության, արդյունավետ, ազգային մակարդակում համատեղելի տարածաշրջանային վաղ ազդարարման մեխանիզմների հետագա զարգացումը՝ Կլիմայական ծառայությունների գլոբալ շրջանակին համահունչ և նպաստել բոլոր երկրների միջև տեղեկատվության տրամադրմանն ու փոխանակմանը:
- (դ) Ամրապնդել միջազգային մեխանիզմների իրականացումը, ինչպիսին է օրինակ՝ Վերականգնման միջազգային պլատֆորմը, որը հնարավորություն կտա ապահովել փորձի և քաղված դասերի փոխանակում երկրների և բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի միջև:
- (ե) Ըստ անհրաժեշտության, աջակցել Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան գործակալություններին հզորացնելու և իրականացնելու հիդրո-դերևութաբանական խնդիրների շուրջ համընդհանուր գործողություններ, որի նպատակն է բարձրացնել ջրային պաշարների հետ կապված աղետների ռիսկի և հասարակության վրա դրանց ազդեցության վերաբերյալ իրազեկվածությունը և պատկերացումը և, պետությունների խնդրանքով, իրականացնել աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություններ:
- (զ) Աջակցել աղետների պատրաստվածության ապահովման համար տարածաշրջանային համագործակցության զարգացմանն ընդհանուր ուսումնական վարժանքների միջոցով:
- (է) Խթանել տարածաշրջանային արձանագրությունների ստեղծումը, որը կհեշտացնի աղետների ժամանակ և աղետներից հետո արձագանքման կարողությունների և ռեսուրսների փոխանակումը:
- (ը) Վերապատրաստել առկա աշխատողներին և կամավորներին աղետների արձագանքման ուղղությամբ:

V. Շահագրգիռ կողմերի դերը

35. Թեև աղետների ռիսկի նվազեցման ապահովման ընդհանուր պատասխանատվությունն ընկնում է պետությունների վրա, այնուամենայնիվ, այն նաև կառավարությունների և համապատասխան շահագրգիռ կողմերի ընդհանուր պատասխանատվությունն է: Մասնավորապես, ոչ պետական շահագրգիռ կողմերն աղետների ռիսկի նվազեցումը տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում իրականացնելու համար կարևոր դեր են կատարում՝ որպես պետության աջակիցներ: Շահագրգիռ կողմերի նվիրվածությունը, պատրաստակամությունը, գիտելիքները, փորձը և ռեսուրսներն անհրաժեշտ են գործընթացի արդյունավետ իրականացման համար:

36. Շահագրգիռ կողմերի կոնկրետ դերերն ու պարտականությունները սահմանելիս, և միևնույն ժամանակ, գոյություն ունեցող համապատասխան միջազգային գործիքները մշակելիս, պետությունները պետք է խրախուսեն բոլոր պետական և մասնավոր շահագրգիռ կողմերի կողմից հետևյալ գործողությունների իրականացումը.

(ա) Քաղաքացիական հասարակությունը, կամավորները, կամավորական ու համայնքահեն կազմակերպությունները հանրային հաստատությունների հետ համագործակցությամբ պետք է տրամադրեն կոնկրետ գիտելիքներ և գործնականում ուղղորդեն աղետների ռիսկի նվազեցման նորմատիվ ծրագրերի, չափանիշների և պլանների մշակման և իրականացման գործընթացը, ներգրավվեն տեղական, տարածաշրջանային և գլոբալ պլանների և ռազմավարությունների իրականացման գործընթացում, նպաստեն և աջակցեն հանրային իրազեկման բարձրացմանը, կանխարգելման և աղետների ռիսկի կրթության մշակույթի ստեղծմանը և խրախուսեն դիմակայուն համայնքների և ներառական ու ամբողջ հասարակությունն ընդգրկող աղետների ռիսկի կառավարման զարգացմանը, որն էլ կհզորացնի համագործակցությունը տարբեր խմբերի միջև: Վերոնշյալի համատեքստում, հարկավոր է հաշվի առնել, որ.

- (I) Կանայք և նրանց մասնակցությունը չափազանց կարևոր է աղետների ռիսկի արդյունավետ կառավարման և գենդերային առումով զգայուն աղետների ռիսկի նվազեցման քաղաքականությունների, պլանների և ծրագրերի մշակման, ռեսուրսների հատկացման և իրականացման համար: Անհրաժեշտ է պատշաճ կերպով զարգացնել կանանց պատրաստվածության կարողությունները, ինչպես նաև վերջիններիս ունակությունները՝ ստեղծելու այլընտրանքային կյանքի պայմաններ հետադեպային իրավիճակներում:
- (II) Երեխաները և երիտասարդները փոփոխության իրականացման կրողն են, և նրանց հարկավոր է տրամադրել տարածք և ստեղծել պայմաններ, որտեղ նրանք կկարողանան իրենց դրսևորել՝ նպաստելով աղետների ռիսկի նվազեցմանը: Սա պետք է իրականացվի օրենսդրությանը, ազգային գործելակերպերին և կրթական ծրագրերին համահունչ:
- (III) Հաշմանդամություն ունեցող մարդիկ և համապատասխան կազմակերպությունները չափազանց կարևոր են աղետների ռիսկի գնահատման և հատուկ կարիքներին համապատասխան ծրագրերի նախագծման և իրականացման համար (ի միջի այլոց, հաշվի առնելով համընդհանուր նախագծման սկզբունքները):
- (IV) տարեց մարդիկ ունեն տարիներով կուտակված գիտելիքներ, հմտություններ և իմաստություն, որոնք անգնահատելի են աղետների ռիսկի նվազեցման գործում: Այսպիսով, տարեց մարդիկ պետք է ներգրավված լինեն քաղաքականությունների, պլանների և հատուկ մեխանիզմների, այդ թվում վաղ ազդարարման համակարգի մշակման գործընթացներում:
- (V) Տեղացի մարդիկ, իրենց փորձով և ավանդական գիտելիքներով, կարևոր ներդրում ունեն քաղաքականությունների, պլանների և հատուկ մեխանիզմների, այդ թվում՝ վաղ ազդարարման համակարգի մշակման և իրականացման գործընթացներում:
- (VI) Միգրանտները նպաստում են համայնքների և հասարակությունների դիմակայունության բարձրացմանը, և նրանց գիտելիքները, հմտություններն ու կարողությունները կարող են օգտակար լինել աղետների ռիսկի նվազեցման ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում:

(բ) Մասնագիտական, գիտական և հետազոտական ընկերությունները և ցանցերը պետք է կենտրոնանան աղետների ռիսկի, այդ թվում առաջացող աղետների ռիսկի գործոնների և սցենարների մշակման վրա միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, մեծացնեն ուսումնասիրությունների թիվը՝ տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում կիրառության համար, աջակցեն տեղական համայնքների և իշխանությունների գործողություններին և որոշումների կայացման համար քաղաքականության և գիտության ճիշտ համադրմանը:

(գ) Գործարար, մասնագիտական ընկերությունները և մասնավոր ոլորտի ֆինանսա-

կան հաստատությունները, այդ թվում՝ ֆինանսական կարգավորման և հաշվապահական մարմինները, ինչպես նաև բարեգործական հիմնադրամները պետք է ներառեն աղետների ռիսկի կառավարումը, այդ թվում բիզնեսի շարունակականության ապահովման խնդիրը, իրենց բիզնես մոդելներում և գործելակերպերում, որը կարելի է իրականացնել աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ներդրումներով՝ հատկապես միկրո, փոքր և միջին ձեռնարկություններում, պետք է իրենց աշխատակիցներին և հաճախորդներին ներգրավեն իրազեկվածության բարձրացման դասընթացներում, ներգրավվեն և աջակցեն աղետների ռիսկի կառավարման ոլորտում ուսումնասիրությունների և նորարարությունների իրագործմանը, ինչպես նաև տեխնոլոգիաների զարգացմանը, կիսեն և տարածեն համապատասխան գիտելիքները, գործելակերպերը և ոչ գաղտնի տվյալները և, ըստ անհրաժեշտության ու հանրային ոլորտի ուղղորդմամբ, ակտիվ մասնակցեն աղետների ռիսկի կառավարման հետ առնչվող նորմատիվ ակտերի և տեխնիկական չափանիշների մշակմանը:

- (դ) Լրատվամիջոցները տեղական, ազգային, տարածաշրջանային և համընդհանուր մակարդակներում պետք է ստանձնեն հանրային իրազեկման բարձրացման ակտիվ ու ընդլայնված դեր և տարածեն աղետների ռիսկի, վտանգների և աղետների, այդ թվում՝ փոքրածավալ աղետների մասին ճշգրիտ տեղեկատվություն՝ պարզ, թափանցիկ և մատչելի ձևով և ազգային իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ: Պետք է մշակեն աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված կոնկրետ համագործակցության քաղաքականություն, ըստ հնարավորության, աջակցեն վաղ ազդարարման համակարգերի և կյանքի փրկության համար անհրաժեշտ պաշտպանական միջոցառումների իրականացմանը, և խրախուսեն կանխարգելման մշակույթի ստեղծումը և համայնքների ակտիվ ներգրավվածությունը հանրային կրթական քարոզարշավներում և հանրային խորհրդատվական գործընթացներում՝ հասարակության բոլոր մակարդակներում և ազգային գործելակերպերին համահունչ:

37. Հղում կատարելով Գլխավոր ասամբլեայի 2013թ. դեկտեմբերի 20-ի 68/211 բանաձևին, համապատասխան շահագրգիռ կողմերի հանձնառությունները կարևոր են՝ համագործակցության ձևերը բացահայտելու և սույն ծրագիրն իրականացնելու համար: Հանձնառությունները պետք է լինեն կոնկրետ և ժամկետներով սահմանափակված, որպեսզի աջակցեն տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում գործընկերության զարգացմանը և աղետների ռիսկի նվազեցման տեղական և ազգային ռազմավարությունների և ծրագրերի իրականացմանը: Խրախուսվում է, որ բոլոր շահագրգիռ կողմերը ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գրասենյակի կայքէջում հրապարակեն իրենց հանձնառությունները և դրանց իրագործումն՝ ի նպաստ սույն ծրագրի կամ աղետների ռիսկի կառավարման ազգային և տեղական ծրագրերի իրականացմանը:

VI. Միջազգային համագործակցություն և գլոբալ գործընկերություն

Ընդհանուր դրույթները

38. Հաշվի առնելով տարբեր մակարդակի կարողությունները, ինչպես նաև տրամադրվող աջակցության մակարդակը և սույն ծրագիրն իրականացնելու առկա կարողությունները, զարգացող պետություններին անհրաժեշտ են համապատասխան միջոցներ, այդ թվում՝ պատշաճ, կայուն և պատեհաժամ ռեսուրսներ, որը հնարավոր է տրամադրել միջազգային համագործակցության և գլոբալ գործընկերության ապահովման և շարունակական միջազգային աջակցության միջոցով՝ ակտիվացնելով զարգացող պետությունների ջանքերն՝ ուղղված աղետների ռիսկի նվազեցմանը:

39. Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում միջազգային համագործակցությունը ներառում է մի շարք աղբյուրներ և հանդիսանում է աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ զարգացող երկրներին տրամադրվող աջակցության կարևորագույն բաղադրիչը:

40. Ուսումնասիրելով երկրների միջև գոյություն ունեցող տնտեսական, տեխնոլոգիական նորարարությունների և հետազոտական կարողությունների անհավասարությունները՝ կարևոր է դառնում տեխնոլոգիաների փոխանցման զարգացումը, որը ներառում է հմտությունների, գիտելիքների, գաղափարների, փորձառության և տեխնոլոգիաների փոխանցումը զարգացած երկրներից զարգացող երկրներին՝ ի նպաստ սույն ծրագրի իրականացմանը:

41. Աղետների նկատմամբ խոցելի զարգացող երկրներին, հատկապես ամենաքիչ զարգացած երկրներին, զարգացող փոքր կղզի- պետություններին, ցամաքով շրջապատված զարգացող և աֆրիկյան երկրներին, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրներին, որոնց առջև ծառայած են որոշակի մարտահրավերներ, պետք է հատկացնել հատուկ ուշադրություն՝ հաշվի առնելով խոցելիության նկատմամբ ռիսկի ավելի բարձր աստիճանը, որը հաճախ մեծապես գերազանցում է աղետներին արձագանքելու և վերականգնվելու իրենց կարողությունները: Նման խոցելիության առկայությունը պահանջում է միջազգային համագործակցության հրատապ զարգացում և իրական ու կայուն գործընկերության ապահովում տարածաշրջանային և միջազգային մակարդակներում՝ երկրների զարգացման գերակա ուղղություններին և կարիքներին համապատասխան: Նման ուշադրության և պատշաճ աջակցության է հարկավոր արժանացնել նաև որոշակի առանձնահատկություններով աղետների նկատմամբ խոցելի երկրներին, ինչպիսիք են՝ կղզային պային, ինչպես նաև ծովերի հետ երկար ափեր ունեցող երկրները:

42. Զարգացող փոքր կղզի-պետություններն աղետներից կարող են տուժել անհամամասնորեն շնորհիվ իրենց յուրահատուկ և որոշակի խոցելիության: Աղետների ազդեցությունը, որոնցից մի քանիսի ինտենսիվությունն աճել է խորացել է կլիմայի փոփոխության պատճառով, խոչընդոտում են այդ երկրների կայուն զարգացումը: Հաշվի առնելով զարգացող փոքր կղզի-պետությունների հատուկ կարգավիճակը, չափազանց կարևոր է բարձրացնել դրանց դիմակայունությունը և որոշակի աջակցություն տրամադրել զարգացող փոքր կղզի-պետություններին աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործողությունների արագացված կարգի (SAMOA)¹¹ վերջնական արդյունքի իրականացման միջոցով:

43. Աֆրիկյան պետություններում շարունակում են արդիական մնալ աղետների և ռիսկերի հետ կապված մարտահրավերները, այդ թվում՝ ենթակառուցվածքների, առողջապահության և կենսապահովման հետ կապված խնդիրները: Վերոնշյալ մարտահրավերներին դիմակայելու համար հարկավոր է միջազգային համագործակցության զարգացում և պատշաճ աջակցության տրամադրում աֆրիկյան պետություններին, որը հնարավորություն կտա իրականացնել սույն ծրագիրը:

44. «Հյուսիս-հարավ» զարգացման համագործակցությունը, որը համալրվում է «Հարավ-հարավ» և «Եռակողմ» զարգացման համագործակցությամբ, համարվում է աղետների ռիսկի նվազեցման կարևորագույն գործոնը, և երկու ուղղություններով էլ կա դրա հետագա զարգացման անհրաժեշտությունը: Գործընկերություններն ունեն լրացուցիչ կարևոր դեր, քանի որ հզորացնում են երկրների ներուժը և աջակցում աղետների ռիսկի կառավարման ազգային կարողությունների զարգացմանը՝ նպաստելով անհատների, համայնքների և պետությունների սոցիալական, առողջական և տնտեսական բարեկեցությանը:

45. Զարգացող պետությունների կողմից իրականացվող «Հարավ-հարավ» և «Եռակողմ» զարգացման համագործակցությունները չպետք է կրճատեն զարգացած երկրների կողմից իրականացվող «Հյուսիս-հարավ» զարգացման համագործակցության շրջանակները, քանի որ դրանք լրացնում են նշյալ զարգացման համագործակցությունը:

¹¹ Գլխավոր ասամբլեայի բանաձև 69/15, հավելված:

46. Աղետների ռիսկի նվազեցման կարևորագույն միջոցներից են տարատեսակ միջազգային աղբյուրներից ֆինանսավորումը, արտոնյալ պայմաններով և փոխադարձ համաձայնությամբ վստահելի, մատչելի, համապատասխան, ժամանակակից և շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնոլոգիաների փոխանցումը, զարգացող երկրներում կարողությունների զարգացմանն աջակցումը և հաստատութենական ու քաղաքական բարենպաստ միջավայրի ստեղծումը բոլոր մակարդակներում:

Իրականացման միջոցները

47. Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- (ա) Վերահաստատել, որ աղետների ռիսկի նվազեցման գործընթացների իրականացման համար զարգացող երկրներին, հատկապես ամենաքիչ զարգացած երկրներին, զարգացող փոքր կղզի-պետություններին, ցամաքով շրջապատված զարգացող և աֆրիկյան երկրներին, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրներին, որոնց դիմաց ծառայել են կոնկրետ մարտահրավերներ, անհրաժեշտ է տրամադրել համակարգված, կայուն և պատշաճ միջազգային աջակցություն՝ երկկողմ և բազմակողմ համաձայնությունների, տեխնիկական և ֆինանսական աջակցության և արտոնյալ պայմաններով տեխնոլոգիաների տրամադրման միջոցով, որը կնպաստի վերոնշյալ երկրների կարողությունների զարգացմանը:
- (բ) Նպաստել ֆինանսական միջոցների, շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնոլոգիաների, գիտության և ներառական նորարարությունների, ինչպես նաև գիտելիքների և փորձառության հասանելիության ապահովմանը տարբեր երկրներին, մասնավորապես զարգացող երկրներին համար, որը հնարավոր է իրագործել գոյություն ունեցող մեխանիզմների, հատկապես երկկողմ և բազմակողմ համագործակցության համաձայնությունների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության և այլ համապատասխան մարմինների միջոցով:
- (գ) Խթանել համագործակցության թեմատիկ պլատֆորմների օգտագործումն ու տարածումը, ինչպիսիք են՝ տեխնոլոգիաների համընդհանուր պլատֆորմները և համակարգերը, որոնք հնարավորություն կտան փոխանակել փորձառությունը, նորարարական և հետազոտական ծրագրերը՝ ապահովելու աղետների ռիսկի նվազեցման ոլորտում տեխնոլոգիաների և տեղեկատվության հասանելիությունը:
- (դ) Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումները ներառել աղքատության կրճատման, կայուն զարգացման, բնական պաշարների կառավարման, քաղաքաշինության և կլիմայի փոփոխության հարմարեցման ուղղություններով երկկողմ և բազմակողմ զարգացման աջակցության ծրագրերում բոլոր ոլորտների ներսում և դրանց միջև, ըստ անհրաժեշտության:

Միջազգային կազմակերպությունների աջակցությունը

48. Սույն ծրագրի իրականացմանն աջակցելու համար.

- (ա) Անհրաժեշտ է, որ Միավորված ազգերի և միջազգային ու տարածաշրջանային այլ կազմակերպությունները, աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ընդգրկված միջազգային և տարածաշրջանային ֆինանսական հաստատությունները և նվիրատու կազմակերպությունները, ըստ անհրաժեշտության, բարելավեն աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված իրենց ռազմավարությունների համակարգումը:
- (բ) Անհրաժեշտ է, որ Միավորված ազգերի համակարգի բոլոր կառույցներն, այդ թվում՝ հիմնադրամները, ծրագրերն ու մասնագիտացված գործակալությունները դիմակայունության հզորացմանն ուղղված աղետների ռիսկի նվազեցման ՄԱԿ-ի

գործողությունների ծրագրի, ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագրերի և առանձին պետությունների զարգացման ծրագրերի միջոցով խթանեն ռեսուրսների նպաստավոր օգտագործումը և աջակցեն զարգացող երկրներին (վերջիններիս խնդրանքով) սույն ծրագրի իրականացման և այլ համապատասխան ծրագրերի համակարգման գործում, ինչպիսին է, օրինակ, Առողջապահական միջազգային կանոնները (2005թ.): Աջակցությունը հնարավոր է իրականացնել նաև կարողությունների զարգացման և հզորացման, ինչպես նաև հստակ և նպատակային ծրագրերի համակարգված և կայուն իրականացման միջոցով, որոնք նպաստում են պետությունների զարգացման գերակա ուղղությունների իրագործմանը:

(գ) Անհրաժեշտ է, որ ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գրասենյակը (UNISDR) մասնավորապես աջակցի սույն ծրագրի իրականացմանը, վերջինիս շարունակականության ապահովմանը և դիտարկմանը հետևյալ կերպ.

- Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունները ժամանակին և պարբերաբար պատրաստեն առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ, մասնավորապես Գլոբալ պլատֆորմի համար, աջակցեն գլոբալ և տարածաշրջանային վերահսկման գործընթացի զարգացմանը և ցուցանիշների մշակմանը և այլ համապատասխան մեխանիզմների հետ համակարգմանը, որոնք կիրառվում են կայուն զարգացման և կլիմայի փոփոխության հարմարեցման համար և վերանայն են համացանցում առկա Հյոգոյի գործողությունների ծրագրի մշտադիտարկման գործիքը:
- Ակտիվորեն մասնակցեն Կայուն զարգացման ցուցանիշների մշակման միջգերատեսչական և փորձագետների խմբի աշխատանքներին:
- Ստեղծեն փորձի վրա հիմնված գործնական ուղեցույց՝ համապատասխան պետությունների հետ համագործակցության և փորձագետների համախմբման միջոցով:
- Համապատասխան շահագրգիռ կողմերի շրջանում ամրապնդեն կանխարգելման մշակույթը, որը հնարավոր է իրականացնել փորձագետների և տեխնիկական կազմակերպությունների միջոցով աջակցելով չափանիշների մշակման գործընթացին, իրականացնելով տվյալ գործունեության շահերը պաշտպանող նախաձեռնություններ, տարածելով աղետների ռիսկի մասին տեղեկատվություն, քաղաքականություններ և գործելակերպեր, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների միջոցով անցկացնելով աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ դասընթացներ, այդ թվում և վերապատրաստման:
- Ազգային պլատֆորմների կամ դրանց համարժեք համակարգերի միջոցով աջակցեն երկրներին՝ ազգային պլանների մշակման և աղետների ռիսկի, վնասների և ազդեցության միտումների վերահսկողության գործընթացներում:
- Գումարեն Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմ և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ աջակցեն ԱՌՆ տարածաշրջանային պլատֆորմների ստեղծմանը:
- Առաջնորդեն Դիմակայունության հզորացմանն ուղղված աղետների ռիսկի նվազեցման ՄԱԿ-ի գործողությունների ծրագրի վերանայման գործընթացը:
- Նպաստեն և շարունակեն աջակցել Աղետների ռիսկի միջազգային համաժողովի գիտական և տեխնիկական խորհրդատվական խմբի կողմից իրականացվող աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գիտական և տեխնիկական աշխատանքներին:

- Համապատասխան պետությունների հետ սերտ համագործակցությամբ առաջնորդեն աղետների ռիսկի նվազեցման 2009թ. տերմինաբանության վերանայման գործընթացը՝ պետությունների կողմից համաձայնեցված տերմինաբանությանը համահունչ:
 - Ստեղծեն շահագրգիռ կողմերի հանձնառությունների ռեգիստր:
- (դ) Միջազգային ֆինանսական հաստատությունները, ինչպիսիք են՝ Համաշխարհային բանկը և տարածաշրջանային զարգացման բանկերը, պետք է քննարկեն սույն ծրագրի գերակա ուղղությունները՝ զարգացող երկրներում աղետների ռիսկի նվազեցման իրականացման համար ֆինանսական աջակցություն և վարկեր տրամադրելու համար:
- (ե) Անհրաժեշտ է, որ այլ միջազգային կազմակերպությունները ու պայմանագրային հիմունքներով գործող մարմինները, այդ թվում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի մասնակիցների համաժողովը, գլոբալ և տարածաշրջանային մակարդակի միջազգային ֆինանսական հաստատությունները և Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային շարժումը, զարգացող պետությունների խնդրանքով, աջակցեն վերջիններին՝ սույն ծրագրի իրականացման և այլ համապատասխան ծրագրերի համակարգման հարցում:
- (զ) Անհրաժեշտ է, որ ՄԱԿ-ի Գլոբալ կոմպակտ նախաձեռնությունը, մասնավոր և բիզնես ոլորտի մասնակցությամբ, խթանի աղետների ռիսկի կարևորության վերհանումը՝ հանուն կայուն զարգացման և դիմակայունության բարձրացման:
- (է) Զարգացող երկրներին աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ աջակցության տրամադրման համար անհրաժեշտ է հզորացնել Միավորված ազգերի կազմակերպության ընդհանուր կարողությունները, որը հնարավոր է իրականացնել տարբեր ֆինանսավորման մեխանիզմների միջոցով պատշաճ ռեսուրսների տրամադրմամբ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Աղետների նվազեցման նպատակային հիմնադրամ ավելի մեծ, պատեհաժամ, կայուն և կանխատեսելի ներդրումների կատարմամբ և սույն ծրագրի իրականացման գործընթացում Հիմնադրամի դերի հզորացմամբ:
- (ը) Անհրաժեշտ է, որ միջխորհրդարանական միավորումը և խորհրդարանականների համապատասխան տարածաշրջանային այլ մարմիններ ու մեխանիզմներ շարունակեն աջակցել աղետների ռիսկի նվազեցմանն ու ազգային իրավական համակարգի զարգացմանը:
- (թ) Անհրաժեշտ է, որ Միավորված քաղաքների ու տեղական կառավարման մարմինների կազմակերպությունը և համապատասխան այլ տեղական ինքնակառավարման մարմիններ շարունակեն աջակցել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությանը, փոխադարձ ուսուցմանը և սույն ծրագրի իրականացմանը:

Հետագա քայլերը

49. Համաժողովը կոչ է անում Ընդհանուր վեհաժողովում, վերջինիս յոթանասուներորդ նստաշրջանի ժամանակ, քննարկել, թե ինչպես արտացոլել աղետների ռիսկի նվազեցման սույն շրջանակային ծրագրի իրականացումը համալիր և համակարգված հետագա գործընթացներում՝ ձևավորված ՄԱԿ-ի համաժողովների և գազաթնաժողովների աշխատանքի արդյունքում, այդ թվում նաև Տնտեսական և սոցիալական խորհրդի, Կայուն զարգացման բարձրաստիճան քաղաքական ֆորումի և չորս տարին մեկ իրականացվող քաղաքականության համապարփակ դիտարկման շրջանակներում՝ հաշվի առնելով Աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմի, աղետների ռիսկի նվազեցման տարածաշրջանային պլատֆորմների և Հյուսիսի գործողությունների ծրագրի ներկայացված մշտադիտարկման ներդրումները:

50. Համաժողովն առաջարկում է Ընդհանուր վեհաժողովին, վերջինիս վաթսունիններորդ նստաշրջանում, հիմնել բաց միջկառավարական աշխատանքային խումբ, որը կազմված կլինի անդամ-պետությունների կողմից նշանակված փորձագետներից և, որին կաջակցի UNISDR-ը՝ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավվածությամբ: Խմբի նպատակն է մշակել հնարավոր ցուցանիշների մի փաթեթ, որը համատեղ կօգտագործվի կայուն զարգացման ցուցանիշների ուղղությամբ աշխատող միջգերատեսչական փորձագետների խմբի աշխատանքների հետ սույն ծրագրի իրականացման գլոբալ առաջընթացի չափորոշման համար: Համաժողովը նաև առաջարկում է, որ աշխատանքային խումբը մինչև 2016թ. դեկտեմբեր ամիսը քննարկի 2009 թվականին ընդունված UNISDR-ի աղետների ռիսկի նվազեցման տերմինաբանության վերանայմանն ուղղված գիտական և տեխնիկական խորհրդատվական խմբի առաջարկությունները, և որ այս աշխատանքի վերջնական արդյունքը ներկայացվի Ընդհանուր վեհաժողով քննարկման և հաստատման համար:

Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների ծրագիր 2015-2030

Շրջանակը և նպատակը

Սույն ծրագիրը վերաբերում է բնական կամ տեխնածին վտանգավոր երևույթներից առաջացող փոքրածավալ և մեծածավալ, հաճախակի և հազվադեպ, հանկարծակի և դանդաղ առաջացող աղետներին, ինչպես նաև բնապահպանական, տեխնոլոգիական և կենսաբանական վտանգներին և ռիսկերին: Ծրագրի նպատակն է ներդնել աղետների ռիսկի կառավարումը զարգացման ոլորտի բոլոր մակարդակներում, ինչպես նաև այդ ոլորտի տարբեր հատվածների միջև:

Անկախվող արդյունքը

Աղետների ռիսկի և կյանքի, ապրուստի և առողջության, ինչպես նաև մարդկանց, ձեռնարկությունների, համայնքների և պետությունների տնտեսական, ֆիզիկական, սոցիալական, մշակութային և բնապահպանական ակտիվների կորուստների էական նվազեցում:

Նպատակը

Կանխել նոր և նվազեցնել առկա աղետների ռիսկը ինտեգրված և միասնական տնտեսական, կառուցվածքային, իրավական, սոցիալական, առողջապահական, մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնոլոգիական, քաղաքական և ինստիտուցիոնալ գործիքների կիրառման միջոցով, որոնք օգնում են կանխել և նվազեցնել վտանգների սպառնալիքն ու խցցելիությունն աղետների նկատմամբ, ինչպես նաև հզորացնել արձագանքման ու վերականգնման պատրաստվածությունը՝ այդպիսով իսկ ամրապնդելով դիմակայունությունը:

Թիրախներ

Մինչև 2030թ. էականորեն նվազեցնել համընդհանուր մահացությունն աղետներից, համընդհանուր մահացության միջին ցուցանիշը 2020-2030 թթ. նվազեցնելով 100 հազարով՝ 2005-2015 թթ. Համեմատությամբ:	Մինչև 2030թ. էականորեն նվազեցնել տուժած մարդկանց թիվը համընդհանուր մակարդակով, համընդհանուր միջին ցուցանիշը 2020-2030 թթ. նվազեցնելով 100 հազարով՝ 2005-2015 թթ. Համեմատությամբ:	Մինչև 2030թ. նվազեցնել աղետների պատճառած ուղղակի տնտեսական վնասը՝ համաշխարհային համախառն ներքին արդյունքի (<ՆԱ) նկատմամբ:	Մինչև 2030թ. էականորեն կրճատել կարևոր նշանակություն ունեցող վտանգներից աղետների պատճառած վնասը և հիմնական ծառայությունների, այդ թվում առողջապահական և կրթական հաստատությունների աշխատանքի խափանումը, որը, այլ միջոցառումների հետ մեկտեղ, կիրականացվի դիմակայունության բարձրացման միջոցով:	Մինչև 2020թ. էականորեն ավելացնել ազգային և տեղական աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություններն ունեցող երկրների թիվը:	Մինչև 2030թ. զարգացող երկրներում էականորեն հզորացնել միջազգային համագործակցությունը՝ պատշաճ և կայուն աջակցության միջոցով համալրելու սույն ծրագրի իրագործման ազգային ջանքերը:	Մինչև 2030թ. էականորեն մեծացնել տարատեսակ վտանգների համար նախատեսված վաղ ազդարարման համակարգերի թիվն ու հասանելիությունը, ինչպես նաև աղետների ռիսկի մասին տեղեկատվության և գնահատումների հասանելիությունը բնակչությանը:
--	--	---	---	--	--	---

Գործունեության առաջնահերթ ուղղությունները

Անհրաժեշտ է նպատակաուղղված գործունեություն ծավալել ոլորտների ներսում և դրանք միջև տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում՝ ստորև ներկայացված չորս գերակա ուղղություններով:

Գերակա ուղղություն 1

Աղետների ռիսկի ըմբռնում:

Աղետների ռիսկի կառավարմանը վերաբերող քաղաքականություններ և գործողությունների պլան մշակելիս պետք է հաշվի առնել աղետների ռիսկի բոլոր բաղադրիչները՝ խցցելիությունը, կարողությունները, մարդկանց և ակտիվների խցցելիությունը սպառնալիքների հանդեպ, վտանգների առանձնահատկություններն ու շրջակա միջավայրը:

Գերակա ուղղություն 2

Աղետների ռիսկի կառավարման կազմակերպչական և իրավական դաշտի բարելավում:

Աղետների ռիսկի կառավարման կազմակերպչական և իրավական դաշտի բարելավումը կարևոր դեր է կատարում աղետների ռիսկի նվազեցման արդյունավետ կառավարման հարցում ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում: Այն ապահովում է ազգային և տեղական օրենքների, կանոնակարգերի հանրային քաղաքականությունների համաձայնեցված գործողությունները և, սահմանելով դերերն ու պարտականությունները, հանրային և մասնավոր ոլորտներին ուղղորդում ու խրախուսում է ձեռնարկել աղետների ռիսկի հետ կապված գործունեություններ:

Գերակա ուղղություն 3

Ներդրումներ աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայունության ամրապնդման համար

Պետական և մասնավոր ներդրումները աղետների ռիսկի կանխարգելման և նվազեցման ոլորտում կառուցվածքային և ոչ կառուցվածքային միջոցների օգնությամբ կարևոր են մարդկանց, համայնքների, պետությունների տնտեսական, սոցիալական, առողջապահական և մշակութային, ինչպես նաև բնապահպանական դիմակայունության բարձրացման համար: Ներդրումները կարող են նորարարություն, առաջընթացի և աշխատատեղերի ստեղծման գործոն հանդիսանալ: Նման միջոցները ծախսային առումով արդյունավետ են և կարևորագույն դեր են խաղում մարդկային կյանք փրկելու, աղետների վնասների կանխման ու նվազեցման գործում, ինչպես նաև ապահովում են արդյունավետ վերականգնում և վերակառուցում:

Գերակա ուղղություն 4

Աղետների պատրաստվածության ամրապնդում արդյունավետ արձագանքման համար և «Անել ավելին, քան արվում է» սկզբունքի ներդրում վերականգնման, վերականգնողական և վերակառուցման գործընթացներում:

Փորձը ցույց է տալիս, որ էլ ավելի արդյունավետ արձագանքման համար անհրաժեշտ է ամրապնդել աղետների պատրաստվածությունը և ապահովել համապատասխան կարողություններ արդյունավետ վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար: Աղետները նաև ցույց են տալիս, որ վերականգնման, վերականգնողական և վերակառուցման փուլերը, որոնց անհրաժեշտ է նախապատրաստվել աղետից առաջ, պետք է օգտագործվեն «անելու համար ավելին, քան արվում էր» աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված ինտեգրված գործողությունների միջոցով: Կարևոր է նաև հնարավորություններ ստեղծել կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ ապահովելու գեղեցիկ և առումով հավասար և բոլորի համար հասանելի արձագանքում, վերականգնում և վերակառուցում:

Ուղղորդիչ սկզբունքները

Աղետների ռիսկի կանխարգելումն ու նվազեցումը՝ որպես պետությունների առաջնային պարտավորություն, այդ թվում նաև համագործակցության միջոցով:	Կենտրոնական կառավարությունների և համապատասխան ազգային իշխանությունների, ոլորտների և շահագրգիռ կողմերի միջև պարտավորությունների բաշխում՝ տվյալ երկրի ներքին պայմաններին և կառավարման համակարգին համահունչ:	Մարդկանց և նրանց ունեցվածքի պաշտպանությունը՝ մարդու բոլոր իրավունքների, այդ թվում նաև զարգացման իրավունքի խթանման ապահովմամբ:	Հասարակության բոլոր շերտերի ներգրավվածության ապահովում:	Գործադիր և օրենսդիր բոլոր պետական հաստատությունների լիակատար ներգրավվածություն ազգային և տեղական մակարդակներում:	Տեղական իշխանությունների և համայնքների իրավազորումը՝ ռեսուրսների, խրախուսման միջոցների և որոշումների կայացման գործընթացներում պատասխանատվության բարձրացման միջոցով՝ ըստ անհրաժեշտության:	Տարատեսակ վտանգների և ռիսկի մասին տեղեկատվության ներառումը որոշումների կայացման գործընթացում:
--	---	---	---	--	--	---

Աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման քաղաքականությունների, ծրագրերի, գործելակերպի և մեխանիզմների համաձայնեցվածությունը տարբեր ոլորտների միջև:	Աղետների ռիսկի տեղական և կոնկրետ առանձնահատկությունների հաշվառումը ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունների սահմանման ժամանակ:	Ներդրումների միջոցով ռիսկի խորքային գործոնների վերացումը՝ որպես ծախսային առումով ավելի շահավետ գործողություն, քան հետ-աղետային արձագանքումն ու վերականգնումը:	«Անել ավելին, քան արվում է» սկզբունքի կիրառումը՝ կանխարգելելու աղետների նոր ռիսկերի առաջացումը կամ նվազեցնելու կոպ ռիսկերը:	Գլոբալ գործընկերություն ու միջազգային համագործակցություն՝ բնորոշ իր արդյունավետությունը, բովանդակությամբ և ամրությամբ:	Հարգացած երկրների և գործընկերների կողմից զարգացող երկրներին տրամադրվող օժանդակությամբ, բովանդակված վերջիններիս կողմից սահմանված կարիքներին և առաջնահերթություններին:
--	--	---	---	--	--



Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագիրը թարգմանվել և տպագրվել է Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի շրջանակներում, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (MTAES) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) անմիջական նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակի (UNOCHA), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (CMSA), ՕՔՄՖԱՄ (OXFAM), Հաբիթաթա ֆոր հյուսնիթի Արմենիա հիմնադրամի (Habitat for Humanity Armenia Foundation), Վորլդ Վիժն Հայաստան (World Vision Armenia), Հայկական Կարմիր խաչի ընկերության (ARCS), «Սեյվ իլ շիլդրեն» (Save the Children) և «Լոռե» փրկարար ջոկատի (Lore Rescue Team) համատեղ ֆինանսավորմամբ:

Սույն փաստաթղթում արտահայտված տեսակետներն անպայման չէ, որ ներկայացնեն ՄԱԶԾ և/կամ մյուս աջակցող կազմակերպությունների պաշտոնական տեսակետներն ու քաղաքականությունը:



9-11 Rue de Varembé
CH 1202, Geneva
Switzerland
www.unisdr.org